# Քրիստոնյա Հայաստան

2009, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (294)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 մայիսի

### Հայաստան-Իրան բարեկամության պատգամավորական խմբի ներկայացուցիչներին



Հանդիպմանն անդրադարձ կատարվեց պատգամավորական խմբի հերթական այցի մանրամասներին, քննարկումներին եւ արձանագրված արդյունքներին: Կարեւորվեց ձեւավորված համագործակցությունը, որի բարի պտուղները պիտի ծառայեն երկու ժողովուրդների առավել բարեկեցիկ եւ առաջընթաց կյանքին:

Վեհափառ Հայրապետն ի դեմս պատգամավորների եւ դեսպանի՝ իր գնահատանքը հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին՝ Իրանում բնակվող հայորդիների հանդեպ հոգատար վերաբերմունքի, հայ հոգեւոր եւ ազգային մշակույթի, դրանց պահպանման հանդեպ ցուցաբերվող ուշադրության համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց նաեւ Մայր Աթոռի եւ ՀՀ-ում Իրանի դեսպանատան միջեւ ձեւավորված ջերմ կապերի մասին:

16 մայիսի

### Չեխիայի գլխավոր դատախազին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի Հանրապետության գլխավոր դատախազ տիկ. Ռենատա Վեսեցկայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ տիար Աղվան Հովսեփյանի:

Ողջունելով մեծարգո հյուրին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ առկա տարաբնույթ հարաբերությունների եւ սերտ համագործակցության առիթով, հաջողություն մաղթեց երկու դատախազներին: Ի դեմս Չեխիայի գլխավոր դատախազի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Չեխիայի իշխանություններին՝ հայ համայնքի եւ Հայ Եկեղեցու հանդեպ դրսեւորվող ուշադրության եւ հոգատարության համար:

Հանդիպմանը խոսվեց նաեւ երկու երկրներում եկեղեցի-պետություն հարաբերությունների եւ եկեղեցական կյանքի մասին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում: «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ոչ միայն հոգեւոր կենտրոնն է հայ ժողովրդի, այլեւ ազգային ինքնության դարբնոցը»,- ասաց Հայոց Հայրապետը՝ ներկայացնելով վերազարթոնք ապրող Հայ Եկեղեցու ներկայիս գործունեությունը:

Հանդիպումից հետո տիկ. Ռենատա Վեսեցկայի գլխավորած պատվիրակությունն այցելեց Վեհարանի թանգարան, Ալեք եւ Մարի Մանուկյանների անվան գանձատուն եւ Մայր տաճար:

23 մայիսի

### Խորվաթիայի նախագահին

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ նախագահների մակարդակով սկսված երկկողմ հարաբերությունների եւ նախանշվող համագործակցության առիթով:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների պատմական ընդհանրություններին, նրանց բաժին ընկած փորձություններին: Կարեւորվեց ժողովուրդների համագործակցությունը, որպեսզի ապագայում մարդկության կյանքում երբեք չկրկնվեն անցյալի ողբերգությունները:

Ամենայն Հայոց Հայրապետը մաղթեց Խորվաթիայի նախագահին, որ Տերը Խորվաթիայի բարեպաշտ ժողովրդին պարգեւի խաղաղ եւ բարօր կյանք՝ երկրի իշխանությունների ջանքերն արդյունավորելով բարի իրագործումներով:



Հանդիպմանը խոսվեց հայկական մշակույթի, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի կարեւոր ներդրման եւ եվրոպական արժեհամակարգի, որի հիմքում ընկած են քրիստոնեական արժեքները, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ կապերի մասին:

Շարունակությունը՝ էջ 2

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հավատավոր Մեր ժողովրդին՝ ի Հայրենիս եւ ի Սփյուռս, եւ շնորհավորում Հանրապետության տոնի առիթով:*

*1918 թվականի մայիսյան փառապանծ հերոսամարտերով մեր ժողովուրդը՝ համախումբ ու միասնական, պաշտպանեց Հայրենի երկիրը եւ բարդ ու դժվարին իրավիճակում հաստատեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:*



*Կարճատեւ գոյություն ունեցավ առաջին Հանրապետությունը, բայց դրվեցին մեր վերանորոգված պետականության հիմքերը: Այսօր մենք հիշում ենք մեր ազգի համար մեծ զոհողություններով եւ միաժամանակ մեծ հույսերով լեցուն ժամանակաշրջանն անցած դարի: Հիշում ենք ամբողջանվեր ջանքերը մեր ժողովրդի, որ առ Աստված հավատով ու հույսով, բազմաթիվ մարտահրավերներ դիմագրավելով՝ կառուցում էր ազատ ու ստեղծագործ կյանքը մեր Հայրենիքի: Հանրապետության տոնի խորհուրդը հրավեր ու քաջալերություն է մեզ՝ ամենայն նախանձախնդրությամբ հոգալու հայրենի մեր երկրի բարգավաճումի եւ համայն մեր ժողովրդի բարօրության համար՝ հանուն մեր նախնյաց, մեր ներկայի ու մեր գալիքի:*

*Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ խաղաղություն շնորհի համայն աշխարհին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին զորացնի հավատքով, հայրենասիրությամբ ու եկեղեցասիրությամբ՝ անսպառ ջանքով ու նվիրումով, ազնիվ ու արդար գործերով ծառայելու ազգային մեր բոլոր իղձերի մարմնավորմանը:*

## Տ. ՆՈՐՎԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԱՐԵՒՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանն ազատվել է Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի պարտականություններից եւ կոչվել հանգստի:

Նորին Սրբության նույն տնօրինությամբ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական նոր պատվիրակ է նշանակվել Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Նորվան արք. Զաքարյանը:

Սկիզբը՝ էջ 1

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

*27 մայիսի*

## Նորվեգիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նորվեգիայի Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Կնուտ Հոուգին (նստավայրը՝ Մոսկվա):



Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին՝ նոր նշանակման առիթով եւ վստահություն հայտնեց, որ սա նոր խթան կդառնա հայ-նորվեգական հարաբերությունների առավել սերտացման եւ զարգացման համար: Վեհափառ Հայրապետը, ի դեմս դեսպանի, շնորհակալություն հայտնեց Նորվեգիայի ժողովրդին՝ մեր պատմության դժվարին ժամանակներում հայ ժողովրդին եւ Հայաստանին ցուցաբերված աջակցության եւ օժանդակության համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական Եկեղեցու ներկայիս գործունեությանը, նրա առջեւ ծառացած մարտահրավերներին եւ միջեկեղեցական հարաբերություններին:

## Յարոսլավլի նահանգապետին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Յարոսլավլի նահանգապետ Սերգեյ Վախռուկովին՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու մարզերի միջեւ ձեւավորվող համագործակցության առիթով եւ մաղթեց, որ այն շարունակի բարի պտուղներ պարգեւել մեր երկու եղբայրական ժողովուրդներին: Ամենայն Հայոց Հայրապետը, ի դեմս նահանգապետի, շնորհակալություն հայտնեց Ռուսաստանի Դաշնության իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եւ երկու հովվապետերի միջեւ առկա սերտ ու ջերմ հարաբերություններին, ինչպես նաեւ Յարոսլավլի մարզի հոգեւոր-եկեղեցական կյանքին:

*29 մայիսի*

## Սլովակիայի Տրնավայի մարզի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սլովակիայի Հանրապետության Տրնավայի մարզի նախագահ Տիբոր Միկուշին՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի:

Հանդիպմանը ներկայացվեցին մարզերի միջեւ ձեւավորվող համագործակցությունը եւ դրա հեռանկարները: Անդրադարձ կատարվեց Սլովակիայի հայ համայնքին, ինչպես նաեւ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու ներկա գործունեությանը:

# Ֆրանսիայի հայոց թեմի հոգեւորականաց երկրորդ համագումարը

Մայիսի 15-ին Ֆրանսիայի Նիս քաղաքում տեղի ունեցավ Ֆրանսիայի հայոց թեմի հոգեւորականաց երկրորդ համագումարը՝ առաջնորդ Նորվան արք. Զաքարյանի նախագահությամբ: Նշված հանդիպումը երկրորդն էր թեմի հիմնադրումից ի վեր (2006 թ.): Օրակարգում ընդգրկված էր երկու հիմնական հարց. ա) քահանան եւ խորհրդակատարությունները, բ) երիտասարդների ներգրավումը եկեղեցական կյանք: Համագումարը բացվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գրով, այնուհետեւ ատենապետի (Մյուռոն ծ. վրդ.Գըվըգյան) եւ ատենադպրի (Հարություն քհն. Թաշճյան) ընտրությունից հետո քննարկումներ եղան վերոնշյալ երկու հարցի շուրջ: Ստեղծվեց երեք հոգուց բաղկացած հանձնախումբ՝ թեմական համայնքներում կատարվող ծիսական արարողությունների մեջ միատեսակություն եւ կանոնավորություն մտցնելու համար: Նշված հանձնախմբի աշխատանքների համար վերջնաժամկետ որոշվեց հաջորդ համագումարի թվականը: Անդրանիկ քհն. Մալճյանը, իբրեւ համակարգող թեմի երիտասարդական կազմակերպությունների գործունեությանց, համառոտ գծերով ներկայացրեց անցնող տարվա երիտասարդական կազմակերպությունների գործունեությունը եւ նրանց ներգրավվածությունը Համազգային հայ երիտասարդաց եկեղեցական միության տարբեր միջոցառումներին:

Հաջորդ օրը գումարվեց Ընդհանուր թեմական տարեկան ժողովը: Տարաբնույթ հարցերի շարքում քննարկվեցին նաեւ թեմական կանոնադրության մեջ որոշակի փոփոխություններ մտցնելու եւ ծխերի կողմից թեմական անդամավճարի հաստատման խնդիրները:



# «Եկեղեցիների դիակոնիկ աշխատանքը. նվաճումներ, խնդիրներ, մտահոգություններ»

Մայիսի 18-20-ը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում կայացավ «Եկեղեցիների դիակոնիկ աշխատանքը. նվաճումներ, խնդիրներ, մտահոգություններ» խորագրով համաժողով՝ կազմակերպված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) կողմից: Ավելի քան քսան երկրների ներկայացուցիչները քննարկեցին դիակոնիկ աշխատանքի ներկան եւ ապագա հեռանկարները, ԵՀԽ դերը դիակոնիկ ծառայութան հետագա զարգացման եւ բարելավման գործում, լսվեցին սոցիալական դիակոնիկ ծառայության տարբեր ոլորտներին առնչվող մի շարք ելույթներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր հայաստանյան բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի տնօրեն պրն Կարեն Նազարյանը, որը հանդես եկավ «Սոցիալական դիակոնիան Հայ Առաքելական Եկեղեցում» զեկույցով:

Համաժողովի մասնակիցներին ընդունեց Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Դանիել Ա Պատրիարքը:

# ԳՈՒԳԱՐԱՑ *թեմում*

## Հանուն մատաղ սերնդի հայեցի դաստիարակության

Մայիսի 11-ին, նախագահությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս Չուլջյանի եւ տնօրինությամբ Լոռու մարզպետ Արամ Քոչարյանի, Վանաձորի Սբ Գր. Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու սրահում տեղի ունեցավ Վանաձորի, Սպիտակի եւ Գուգարքի տարածաշրջանների հանրակրթական դպրոցների տնօրենների հանդիպում-ժողով: Ժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանը, թեմի ՔԴԿ-ի պատասխանատու տեր Վահան քհն. Ազարյանը, մարզի կրթության վարչության պետ Մինաս Սայադյանը եւ հոգեւոր հայրեր: Ժողովը կազմակերպվել էր մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության, հայրենասիրության եւ ազգային կերտվածքով առողջ սերունդ դաստիարակելու հարցերը քննարկելու համար: Ժողովում արծարծվեցին Հայ Եկեղեցու եւ ժողովրդի պատմություն, հայոց լեզու եւ գրականություն առարկաների դասավանդմանն առնչվող տարաբնույթ խնդիրներ:

Գուգարաց թեմի առաջնորդն անդրադարձավ աշակերտների շրջանում տիրող բարոյահոգեբանական այն մթնոլորտին, որը հեռուստատեսության միջոցով ազդում է նրանց դաստիարակության վրա եւ խոսեց դպրոց-հասարակություն-փողոց հակասության մասին: Սրբազան հայրն օրինակներով խոսեց արժեզրկված արժեքների, մեր ինքնությունը խաթարող երեւույթների մասին՝ խիստ կարեւորելով ազգային արժեհամակարգից բխող տոների, հիշատակության օրերի հանդիսավոր կատարումը՝ համադպրոցական միջոցառումների տեսքով: Նա առավելապես շեշտեց ռազմահայրենասիրական, կրոնաբարոյական արժեքներով սերունդներ դաստիարակելու առաջնայնության խնդիրը եւ հորդորեց դպրոցների տնօրեններին աչալուրջ եւ հետեւողական լինել վերոնշյալ հարցերի նկատմամբ: Օգտվելով պատեհ առիթից՝ առաջնորդն առաջարկեց մանկապարտեզների եւ դպրոցների տնօրեններին ձերբազատվել կրթօջախների թվային անվանումներից եւ վերանվանել հայազգի հայտնի մտավորականների, զորավարների, պետական ու հոգեւոր գործիչների, սրբերի անուններով, ինչը եւս դաստիարակչական նշանակություն կունենա:

Լոռու մարզպետն իր ելույթում կիսեց առաջնորդի մտահոգությունները ծառացած խնդիրների շուրջ եւ շեշտեց, որ ինքն անձամբ ամենայն նախանձախնդրությամբ կհետեւի ժողովում բարձրացված հարցերի լուծման գործընթացին՝ կարեւորելով ազգային ու պետական տոներին նվիրված միջոցառումներին դպրոցական բարձր դասարանցիների մասնակցության անհրաժեշտության մասին:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանը՝ անդրադառնալով եկեղեցի-պետություն-դպրոց համագործակցության ընդլայնման կարեւորությանը:

Ելույթ ունեցավ նաեւ Լոռու մարզի կրթության եւ մշակույթի վարչության պետ Մինաս Սայադյանը: Պարոն Սայադյանը նշեց, որ ինչպես Հայ եկեղեցու պատմություն առարկայի, այնպես էլ դպրոց մուտք գործած ցանկացած այլ նոր առարկայի դասավանդման մշակույթը ձեւավորելու համար հարկավոր է ժամանակ, ուստի վարչությունը հետայսու առավել հետեւողական պետք է գտնվի դպրոցում սույն առարկայի դասավանդման հետ կապված բացթողումներին ու ծագած դժվարություններին:

Իր ելույթում տեր Վահան քհն. Ազարյանն անդրադարձավ դպրոցից դուրս երեխաների հոգեւոր անվտանգությանը սպառնացող եւ զանազան միջոցներով մարդորսությամբ զբաղվող կրոնական կազմակերպությունների գործունեությանը եւ շեշտեց, որ հարկավոր է պարբերաբար նմանատիպ հավաքույթներով վերանայել ու հստակեցնել եկեղեցի-պետություն-դպրոց համագործակցության սկզբունքները:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*

# Օլիմպիադա Գյումրիում՝ Հայոց Եկեղեցու պատմություն առարկայից

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը՝ Շիրակի մարզպետարանի կրթության վարչության հետ համագործակցաբար, Գյումրի քաղաքի 40 դպրոցում իրականացրեց օլիմպիադա՝ Հայոց Եկեղեցու պատմություն առարկայից:

Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանի օրհնությամբ՝ կազմակերպված օլիմպիադայի առաջին փուլին մասնակցեցին 6-րդ եւ 7-րդ դասարանների աշակերտները, որոնցից լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները մայիսի 14-ին մասնակցեցին համաքաղաքային փուլին:

Երեխաների գիտելիքներն ու ստեղծագործական ունակությունները վեր հանելուն միտված աշխատանքների արդյունքում հաղթող ճանաչվեց 6-րդ եւ 7-րդ դասարանների երեքական աշակերտ, ովքեր մայիսի 20-ին Գյումրի քաղաքի տարբեր դպրոցներից ներգրավված աշակերտների ուժերով կազմակերպված գրական-երաժշտական ցերեկույթի շրջանակներում պարգեւատրվեցին՝ համապատասխանաբար արժանանալով 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգի մրցանակների:

*Քրիստոնեական դաստիարակության կենտրոն*

*Վերահրատարակություն*

# Երվանդ Տեր-Մինասեանց. «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը վերահրատարակել է 1908 թ. Ս. Էջմիածնում տպագրված 20-րդ դարի նշանավոր հայագետ Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ» արժեքավոր աշխատությունը:

Երվանդ Տեր-Մինասյանի աշխատությունները հիմնականում վերաբերում են հայ-ասորական եկեղեցական հարաբերություններին, Ընդհանրական եկեղեցու պատմությանը, Արեւելքում եւ հայոց մեջ տարածված քրիստոնեական աղանդների ծագմանը, Ե-Է դարերում Հայ Եկեղեցու դավանաբանական դիրքորոշմանը, զանազան եկեղեցական մատենագիրների, հայ, հույն եւ ասորի աստվածաբանների դավանաբանական գործերի քննությանը եւ այլն:

Գիրքը հրատարակության են պատրաստել Գեւորգ աբեղա Սարոյանը, Հովհաննես սարկավագ Ազնավուրյանը եւ Հասմիկ Մելքոնյանը:

Ուսումնասիրությունը լույս է տեսել տեր եւ տիկին՝ Արմեն եւ Նունե Սարգսյանների մեկենասությամբ:

*Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԿԻՐԱԿՈՍ Ա ՎԻՐԱՊԵՑԻ (1441-1443)

*Սկիզբը՝ թիվ 9*

Այսպես սկսվեց Կիրակոս Վիրապեցու կաթողիկոսությունը, որը տեւեց մեկ տարի կամ մի փոքր ավելի: Դրան հետեւեցին գանազան գրգռություններ, փոթորկվեցին նախանձոտ կրքերը, գլուխ բարձրացրին հակառակությունները, նոր կացության դեմ դժգոհությունները եւ բավարարություն չգտած ձգտումները: Այդ երեւույթների ետեւում կանգնած էին Սյունիքի եպիսկոպոսությունը եւ Տաթեւացու աշակերտությունը: Թերեւս առիթն այն էր, որ Էջմիածինը շենացնող Այրարատի ու Վասպուրականի հետ Սյունիքը չէր հիշվել: Ինքը՝ Վիրապեցին, թեկուզեւ 32 տարի հաստատվել էր Այրարատում, վասպուրականցի էր եւ կաթողիկոսական աթոռ էր բարձրացել վասպուրականցիների աջակցությամբ: Ավելին. նրա շուրջը հավաքվեցին վասպուրականցիները, որոնց մեջ ազդեցիկ ու կարեւոր դեր ստացավ Թովմա Մեծոփեցին: Այդ ամենը դուր չէր գալիս երկրորդական շարքը մղված սյունեցիներին ու տաթեւյան խմբին, որոնք իրենց համարում էին Արեւելյանների կենտրոնը: Շատ վասպուրականցիներ Սյունիքում էին կրթվել, որոնցից էր եռամեծ Գրիգոր Տաթեւացին:

Գրգռությունների գլուխ կանգնեցին Վրաստանի եպիսկոպոս Մարկոսը, որը Հերմոնեցու աշակերտն էր եւ Վաղարշապատի ժողովին չէր մասնակցել: Նրան միացավ Սաղմոսավանքից Աստվածատուր վարդապետը, որը դժգոհ էր կաթողիկոսից: Ընդդիմադիրներն առաջին հերթին փորձեցին դաշնակիցներ ձեռք բերել: Կաթողիկոսի ընտրության ժամանակ Կիրակոսն ուներ մրցակիցներ՝ ի դեմս Հովհաննես Հերմոնեցու, Զաքարիա Հավուցթառեցու եւ Գրիգոր Արտազեցու, սակայն վերջինիս դիրքերն ընտրության ժամանակ թուլացել էին, քանի որ երեքն էլ պատկանում էին միեւնույն թեւին: Որպես կաթողիկոսական աթոռի թեկնածու, թերեւս, ամենահարմարը Գրիգոր Արտազեցին էր, սակայն մյուս երկուսն ավելի հեղինակավոր էին եւ թույլ չտվեցին նրա կաթողիկոսանալը: Հերմոնեցու դիրքերը, սակայն, փլուզվեցին, քանի որ նա խլացավ, իսկ Հավուցթառեցին տարիքի հետեւանքով կորցրեց առողջությունը: Մարկոսը փորձեց այս առաջացած տարիքի հոգեւոր այրերին համոզել, որ համաձայնեն Արտազեցու կաթողիկոսանալուն: Ընդդիմադիրները կարողացան նրանց համոզել: Հերմոնեցին իսկույն Կիրակոսի դեմ դուրս բերեց 30-40 կրոնավորի՝ գահընկեց անելու համար Կիրակոս Վիրապեցուն: Դժվարը նրա դեմ մեղքեր հարուցելն էր: Ուստի տեսնելով, որ առաջինի Կիրակոսի վրա մեղքեր բարդել հնարավոր չէ, գործին այլ բնույթ տվեցին. թե ընտրությունն օրինական չի եղել, թե նրան կաթողիկոսական աթոռ են բարձրացրել Աղթամարի կաթողիկոսության եպիսկոպոսներն ու վարդապետները, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը երկար ժամանակ բանադրված է եղել: Դրանից հետեւում էր, թե նա մկրտված չէ եւ քրիստոնյա չէ: Մյուս հիմնավորումն այն էր, թե կաթողիկոսը պետք է ընտրվեր եպիսկոպոսներից եւ ձեռնադրվեր: Իսկ Կիրակոս Վիրապեցին ընտրության ժամանակ եպիսկոպոս չէր եղել: Ընդդիմադիրները Վիրապեցուն փորձում էին հերձվածող համարել, քանի որ նա հիվանդների օծումը բերել էր Կոստանդնուպոլսից: Սակայն այս մասին Մեծոփեցին ոչինչ չի հայտնում:

Դավադրությունը գաղտնի չմնաց, քանի որ Հերմոնեցու խումբը գործում էր բացահայտորեն: Դավադիրները գալիս էին Էջմիածին՝ իրենց մտադրությունն ուժով ու բռնությամբ կենսագործելու: Կիրակոսը, սահաբեկված դրանից, փախուստի դիմեց, սակայն դավադիրները հայտնաբերեցին նրա գտնվելու վայրը եւ նրան վերցրեցին իրենց հսկողության ներքո: Հետո նրան տարան Երեւանի խան Յաղուբի մոտ, առանց որի Կիրակոսի գահընկեցությունը հնարավոր չէր, թեկուզեւ գահընկեցության իրավունքն ազգային ժողովինն էր: Սակայն վերջինս գումարվել էր Յաղուբի հովանավորությամբ, ուստի դավադիրները չէին կարող այդ աչքաթող անել: Երեւանի խանի առաջ Հերմոնեցին մեղադրեց Կիրակոսին՝ մկրտված չլինելու եւ քրիստոնյա չլինելու մեջ: Ուստի նա խնդրեց Յաղուբին, որ եպիսկոպոսներից նոր կաթողիկոս ձեռնադրեն: Մեղադրանքը, իրոք, անհեթեթ էր եւ պատիվ չէր բերում Տաթեւի դպրոցի մեծ վարժապետին: Յաղուբը, որ բոլորովին էլ հիմար անձ չէր, նրան պարզ մեղադրեց, թե հենց նրանք էին ձեռնադրել Կիրակոսին թե՛ եպիսկոպոս եւ թե՛ կաթողիկոս: Հերմոնեցին դա ուրացավ՝ ասելով, թե Թովման ու իր ընկերներն են դա կատարել, այլ խոսքով՝ մեղադրելով Թովմա Մեծոփեցուն եւ Վասպուրականի եպիսկոպոսներին, որոնց ազդեցության տակ էլ կատարվել են ձեռնադրությունները: Կիրակոսը, ապշահար եղած, լուռ մնաց, սակայն Մեծոփեցու աշակերտներից Կարապետ վարդապետը եւ Ծերուն անունով մի երիտասարդ համարձակվում են պատասխանել, որ բողոքողները խաբեբաներ են: Բողոքողներից Ստեփանոս վարդապետ Եղեգեցին այնպես է հարվածում Ծերունի բերանին, որ այն լցվում է արյունով: Յաղուբը, դրա վրա զայրանալով, մերժում է բողոքողներին, սակայն Հավուցթառեցին առանձին տեսակցում է Յաղուբի հետ եւ կաշառում նրան՝ անհամար արծաթ մատուցելով: Ի վերջո Յաղուբը համաձայնում է, որ կաթողիկոսի գահընկեցության հարցը լուծեն հայերը: Նա համոզում է Յաղուբին, որ կաթողիկոս ձեռնադրվի Գրիգոր Արտազեցին:





Այսպես որոշվեց Կիրակոսի գահընկեցության խնդիրը: Իսկ Գրիգորի համար հիշատակագիրը գրում է. «Գրիգոր եպիսկոպոս Մակուցի նստաւ Թուրքով եւ ղաբալով»:

Այս ամենը կատարվեց ոչ կանոնական կարգով եւ ոչ էլ պատճառներ կային դրա համար: Գրիգոր Արտազեցու կաթողիկոսանալը, կարելի է ասել, իրավական չէր: Սակայն 1443 թվից ժամանակակից հեղինակները եւ հիշատակագիրները Գրիգորին համարում են կաթողիկոս: Այդ է արձանագրում նաեւ Թովմա Մեծոփեցին: Փաստորեն 1443 թվից դադարում է Կիրակոս Վիրապեցու կաթողիկոսությունը:

Կիրակոսը, առանց դիմադրելու եւ իր իրավունքը պաշտպանելու, ուրախությամբ ազատվեց այդ ծանր պարտականությունից եւ հրաժարական տվեց: Ընդդիմադիրներն ազգային ժողովի տեսքով նրան գահընկեց արին եւ Գրիգորին կաթողիկոսական աթոռ բարձրացրին: Սակայն դա մեծագույն հարված եղավ հայրապետական աթոռին եւ 1441 թվի որոշմանը, որով Էջմիածինը դառնում էր Հայոց Առաքելական Եկեղեցու կենտրոն: Դա հնարավորություն տվեց, որ Սսի կաթողիկոսությունը ուշքի գա, եւ եկեղեցական միությունը չկայանա:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՔ

Ըստ եկեղեցական ավանդության՝ Հռոմի Ս. Պողոս կուսանաց վանքում ապրում էին Հռիփսիմյան երեսունյոթ կույսերը՝ Գայանե մայրապետի գլխավորությամբ: Այդ ժամանակներում Հռոմի Դիոկղետիանոս կայսրը, որ իրեն շրջապատող շատերի նման կռապաշտ էր, որոշեց ամուսնանալ: Ուստի նկարիչներին պատվիրեց իր հսկայածավալ ողջ տերության մեջ գտնել աղջիկներից գեղեցկագույնին ու պատկերել նրան, որպեսզի այդկերպ ընտրություն կատարի: Որոնումները նրանց բերեցին Հռոմում տեղակայված այն արգելավանքը, որի վանամայրն էր Գայանեն: Վերջինիս սանուհիներից էր աստվածավախ եւ արքայական տոհմի դուստրերից Հռիփսիմեն: Ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, երբ նկարիչները սողոսկեցին առաքինի կանանց սուրբ կայանը, հանկարծ կույսերի միջից տեսան պարկեշտագեղ Հռիփսիմեին ու նրա սքանչելի տեսքից ապշած՝ նրան իսկույն տախտակի վրա նկարեցին ու հասցրին թագավորին: Արքան, հիացած նրա հրաշագեղ պատկերով, շուտափույթ կերպով սկսեց հարսանիքի պատրաստություն տեսնել: Իսկ երանելի, պարկեշտասեր Գայանեն, մյուս կույսերի հետ հիշելով սուրբ ուխտը, իրենց ընտրած կրոնի զգաստության սրբությունը, սկսեց Բարձրյալից օգնություն եւ ողորմություն հայցել այդ անակնկալ փորձությունից դուրս գալու համար:

Այսպիսով, Հռիփսիմյան երեսունյոթ կույսերը՝ Գայանեի առաջնորդությամբ ու մի քանի քահանաների ուղեկցությամբ, թողեցին իրենց ծննդավայրը, հարազատներին, Ս. Պողոս մենաստանը եւ կայսեր հալածանքներից ազատվելու նպատակով լքեցին երկիրը: Նրանք եկան հասան Հայոց աշխարհի Այրարատ գավառի Վաղարշապատ քաղաքը: Սակայն դրանով չվերջացան հետապնդումներն ու հալածանքները: «Ամեն կողմերում լարված որոնում էին, սուրհանդակներ ուղարկում, որ թերեւս կարողանան նրանց գտնել: Դեսպան եկավ նաեւ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ եւ բերեց հրովարտակը», ուր Հռոմի կայսրը նախ դատապարտում էր «քրիստոնյա աղանդների»՝ երկրի համար կործանարար գործունեությունը եւ հետո խնդրում հայոց թագավորին «չքնաղագեղ կույսին» իր տիրույթներում գտնելու դեպքում կա՛մ Հռոմ ուղարկել, կա՛մ իր մոտ պահել, «քանզի նրա նմանը երբեք չգտնվեց Հունաց աշխարհում»:

Երբ հրովարտակի թուղթն ամբողջությամբ ընթերցվեց, արքան անմիջապես սուրհանդակներ ուղարկեց երկրի տարբեր կողմերը՝ «գեղանի օրիորդին» գտնողներին մեծամեծ պարգեւներ խոստանալով: Շուտով տարագրյալների թաքստոցը հայտնի դարձավ, եւ «Հռիփսիմեի պարկեշտության ու չքնաղ գեղեցկության համբավը տարածվեց բազմամբոխ հրապարակներում, եւ ամեն մարդ մյուսին իր զարմանքն էր հայտնում: Իսկ նրա գեղեցկությունը տեսնելու համար հսկայական բազմություն հավաքվեց, տեսության գալիս էին նախարարներն ու ավագանու մեծամեծները»:

Տրդատ թագավորը կարգադրեց թանկարժեք հանդերձներ ու զարդարանքներ ուղարկել, որպեսզի Հռիփսիմեն պատշաճ հանդիսավորությամբ արքունիք մտնի, քանի որ արդեն որոշել էր կնության առնել նրան: Սակայն երբ Հռիփսիմեն մերժեց հրավերը, թագավորի կարգադրությամբ բռնի ուժով բերվեց պալատ ու փակվեց մի սենյակում: Այստեղ կույսն արտասվագին աղոթքներով օգնություն էր հայցում Տիրոջից, «որպեսզի կարողանա սրբությամբ վախճանվել Նրա մեծ անվան համար»: Այդ պահին ներս մտավ Տրդատ թագավորը ու փորձեց բռնի կերպով տիրանալ նրան: Սակայն Հռիփսիմեն, որ Սուրբ Հոգով զորացել էր, կարողացավ պաշտպանվել, իսկ «թագավորը, որ շատ ուժեղ էր համարվում եւ Հունաց օտար աշխարհում մեծ ուժի բազում օրինակներ էր ցույց տվել եւ զարմացրել էր նաեւ իր թագավորության մեջ կատարած բազում քաջագործություններով, այժմ պարտվեց մի աղջնակից, այն է՝ հաղթվեց Քրիստոսի կամքով ու զորությամբ»:

Այսպես, Հռիփսիմեն մերժեց ու անվեհեր դիմադրեց թագավորի վայրագ կամքին: Հետեւապես, Տրդատը խնդրեց Գայանեին, որպեսզի համոզի իր սանուհուն, բայց վերջինս հորդորեց կայուն մնալ Քրիստոսին տված հավատարմության մեջ: Ի վերջո, Տրդատի հրամանով չարաչար տառապանքներով ու տանջանքներով նահատակվեցին Ս. Հռիփսիմեն եւ մյուս կույսերը: «Իսկ այն այրերն ու կանայք, որ կամեցան հավաքել ու թաղել նրա մարմնի մասերը, շուրջ 32 հոգի, սրի քաշվեցին ու կոտորվեցին» (Ագաթանգեղոս): Հաջորդ օրը նույն դաժանագույն մահվան արժանացրին նաեւ Գայանեին. սկզբում կտրեցին լեզուն, «քանի որ համարձակվել էր իր վնասակար խրատներով կորստյան մատնել այնպիսի կույսի, որը չաստվածների գեղեցկությունն ուներ մարդկանց մեջ»: Դահիճները սպանեցին նաեւ հնձանում մնացած այն միակ հիվանդ կույսին, որին չէին տարել նահատակության:



*Շարունակությունը՝ էջ 4*

# ԵՐԲԵՄՆ ԻՆՁ ՀԻՇԵՑԷՔ

## Գեւորգ Զ Չորէքչյան կաթողիկոսի մահվան 55-րդ տարելիցի առիթով



1954 թվականի մայիսի 7-ին Երեւանի հիվանդանոցում Ամենայն Հայոց Գեւորգ Զ Չորեքչյան Հայրապետը, ընդունելով իրեն այցի եկած հոգեւոր ճեմարանի նորաթուխ սարկավագներին, հորդորեց նրանց. «Մի՛ հուսալքվեք: Եղեք լավատես: Էջմիածինը տառապալից ու փշոտ ճանապարհ է անցել, բայց կենդանի է մնացել ու կմնա... Սիրեցե՛ք Էջմիածինը. մե՛ղք է Էջմիածինը»: Հրաժեշտից առաջ Վեհափառի վերջին պատգամն էր. «Տերն ընդ Ձեզ: Երբեմն Ինձ հիշեցեք»:

Երկու օր անց Գերագույն հոգեւոր խորհուրդն ու Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանությունը գուժեցին 86-ամյա Վեհափառի մահվան լուրը. «Ծանր հիվանդության հետեւանքով ի Տեր հանգավ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեւորգ Զ հայրենասեր եւ մեծագործ Հայրապետը»: Ամենայն Հայոց 129-րդ Հայրապետի վերջին օծումն ու թաղումը տեղի ունեցավ մայիսի 27-ին՝ Համբարձման տոնին: Թաղվեց Մայր տաճարի բակում՝ Խրիմյան Հայրիկի շիրմի կողքին:

Դեռեւս 1889 թվականին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի չորս ուսանող դարձան 15-ամյա ճեմարանի առաջին ձեռնադրված կուսակրոն հոգեւորականները: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանության շարքերը լրացրած հոգեւորականների թվում էր Գեւորգ Չորեքչյանը՝ խոստումնալից ճեմարանականներից մեկը, ով իր ուսումը դեռ պետք է լրացներ Լայպցիգի համալսարանում, ապա եւ Լայպցիգի կոնսերվատորիայում:

Հետագայում՝ Մայր Աթոռի համար ծանրագույն տարիներին, երբ արդեն գոց էին ճեմարանի դռները, թերեւս ճակատագրի նախախնամությամբ, հենց նա էր իր հայրապետական կարեւորագույն առաքելություններից մեկը դարձնելու ճեմարանի վերաբացման հարցը: Յոթ տարի շարունակ (1938-1945 թթ.)՝ իբրեւ կաթողիկոսական տեղապահ, եւ ապա ինը տարի՝ իբրեւ Ամենայն Հայոց կաթողիկոս, խորհրդային կապանքներով կաշկանդված, Գեւորգ Զ կաթողիկոսը ստիպված էր մաքառել Մայր Աթոռի ու նրա ոտնահարված իրավունքների վերականգնման համար: Եվ իզուր չէ, որ իր անդրանիկ կոնդակում 77-ամյա Վեհափառը գրում էր. «Սարսուռ եմ զգում յիշելով ծանր պարտականութիւնները եւ բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, եւ խորհում եմ՝ պիտի կարողանա՞մ արդեօք, ծերութեանս հասակում, խղճի մտօք կատարել պարտքս...»:

1938-ին՝ Խորեն Ա Մուրադբեկյանի եղերական մահվանից հետո, խորհրդային Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմը որոշել էր փակել Էջմիածնի վանքը՝ վերածելով թանգարանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել եւ վերացնել հայ հոգեւորականության կենտրոնը՝ Էջմիածնի կաթողիկոսությունը: Անհեռատես այս որոշումն Աստծո կամոք չիրականացավ: Սակայն Վեհափառ Հայրապետը հաջողեց մեղմել նաեւ խորհրդային իշխանությունների որդեգրած թշնամական վերաբերմունքը Հայ Եկեղեցու հանդեպ՝ համագործակցության եզրեր գտնելով պետության հետ՝ ի շահ Եկեղեցու եւ հայրենիքի:

Այսպես, Հայրենական մեծ պատերազմի տարիներին կաթողիկոսական տեղապահ Գեւորգ արք. Չորեքչյանի կոչով ու եկեղեցական հանգանակությամբ կազմավորվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Փոխարենը 1944 թվականին Մայր Աթոռ Սբ Էջմիածնին ի վերջո արտոնվեց հրատարակել պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածինը»: Սակայն Եկեղեցու բնականոն գործունեության համար սա չափազանց քիչ էր:

1945 թ. ապրիլին Ստալինին ուղղած նամակում Վեհափառ Հայրապետը խնդրում էր թույլ տալ վերաբացել հոգեւոր ճեմարանը, Էջմիածնին վերադարձնել նախկին ճեմարանի գրադարանը, թույլ տալ ունենալ տպարան, արտոնել «Էջմիածին» ամսագրին հրապարակելու հայագիտական հոդվածներ, Մայր Աթոռին վերադարձնել բռնագավթված մի քանի շինություններ, Եկեղեցուն վերադարձնել նվիրական սրբավայրեր հանդիսացող Հռիփսիմեն, Գեղարդն ու Խորվիրապը, կառուցել Զվարթնոցը՝ ըստ Թորոս Թորամանյանի նախագծի, անհրաժեշտության դեպքում թույլ տալ արտասահմանի հոգեւորականներին գալ Հայաստան՝ եպիսկոպոս ձեռնադրվելու, եւ այլն:

Վեհափառի՝ Կոմունիստական ղեկավարին ներկայացրած խնդիրներից շատերն այսօր զարմանալիորեն հեշտ են թվում: Սակայն Վեհափառ Հայրապետը մինչեւ իր կյանքի վերջը ստիպված էր խորհրդային իշխանություններին հիշեցնել իր խնդրանքների մասին՝ երջանկություն ունենալով տեսնել միայն հոգեւոր ճեմարանի բացումը: Սառը պատերազմի այդ տարիներին Վեհափառին հնարավորություն չտրվեց անգամ մյուռոնօրհնություն կատարել, որ Մայր Աթոռում տեղի չէր ունեցել 1926 թվականից ի վեր: Այսուհանդերձ Վեհափառը շարունակում էր պայքարել՝ եւ ոչ միայն եկեղեցական խնդիրների լուծման համար:

Այսօր էլ, երբ շարունակում է հրատապ մնալ Սեւանա լճի հարցը, մեծ հետաքրքրությամբ ես ընթերցում Վեհափառի՝ 1946-ին Բերիային ուղղած նամակը: «Թե՛ Խորհրդային Միության, թե՛ Եվրոպայի ու Ամերիկայի բազմաթիվ գաղութների Հայ Եկեղեցու միացյալ հոտի խիղճը ցնցված է Սեւանի ջրերի նման օգտագործմամբ, ծնկնաբուծության եւ ջրահաղորդակցության վերացման, ջրազուրկ եղած 100 հազար հա հողերի ճահճի վերածվելու եւ գլխավորապես ամբողջ երկրի կլիմայական պայմանների փոփոխության պատճառով, որ նույն դարավոր մշակույթի կործանումն է»,- գրում էր Վեհափառը՝ խնդրելով վերանայել Սեւանա լճի ջրերի օգտագործման ծրագիրը:

Խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաներին ուղղած նամակներում Վեհափառ Հայրապետը գրում էր բռնադատված հոգեւորականների, ղրիմահայ աքսորյալների, Ամարասի վանքի վերաբացման, հայերենի միասնական ուղղագրությունը վերականգնելու եւ շատ ու շատ այլ խնդիրների մասին: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհի մեծերին՝ Միացյալ Նահանգների, Անգլիայի ու ԽՍՀՄ ղեկավարներին ուղղած նամակում Վեհափառ Հայրապետը բարձրացրեց հայկական պահանջատիրության հարցը:

Այսօր, երբ արդեն պատմություն է դարձել այս ամենը, դժվար է թերագնահատել Գեւորգ Զ Չորեքչյան կաթողիկոսի գործը: Գեւորգ Զ Չորեքչյան կաթողիկոսը Սբ Էջմիածնի տառապալից ու փշոտ ճանապարհի անցորդը եղավ, որ նույնքան տառապալից աշխատանքով ճգնում էր բարի հունդեր սերմանել այդ ճանապարհին՝ այդպես էլ չունենալով իր իսկ աշխատանքի պտուղները վայելելու երջանկությունը...

Եվ բոլորովին անարդարացի էր Սփյուռքի քաղաքական որոշ ուժերի կողմից նրան վերագրված «կարմիր կաթողիկոս» պիտակը: Խորհրդային այդ ծանր տարիներին նա առավել նման էր իր իսկ հեղինակած երգի հերոսին՝ Ռաֆայել Պատկանյանի հայտնի բանաստեղծության խիզախ պատանուն.

«Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Այլյաց մեջը պտրում եմ...»:

Եվ այսօր՝ Վեհափառ Հայրապետի մահվանից 55 տարի անց, հատկապես դժվար է մոռանալ նրա վերջին պատգամները՝ «Սիրեցե՛ք Էջմիածինը», եւ ապա՝ «Երբեմն ինձ հիշեցեք»:

*ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ*

# ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՔ

*Սկիզբը՝ էջ 3*

*Սկիզբը՝ էջ 3*

Այս պատումը մենք գտնում ենք Դ դարի պատմիչ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ: Հետագայում՝ քրիստոնեության ընդունումից հետո, Լուսավորիչը շուրջ ինն օր հավաքեց կույսերի նշխարները եւ նրանց նահատակության վայրերում, ըստ իր տեսիլի, կառուցեց ու կնքեց երեք փայտաշեն վկայարան՝ Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի եւ մյուս կույսերի անուններով: «Տեսա երեք արյան գույնի խարիսխներ. մեկը այն տեղում, ուր նահատակվեց սուրբ Գայանեն երկու ընկերների հետ, մեկը այն տեղում, ուր սուրբ Հռիփսիմեն նահատակվեց 32 ընկերների հետ, եւ մեկը՝ հնձանի տեղում: Դրանց սյուներն ամպեղեն էին, որոնց վրա կային լուսեղեն խաչեր»: Հռիփսիմյանց կույսերից էին նաեւ Նունեն եւ Մանեն, որոնցից առաջինը նույն խմբի հետ Հայաստան հասնելուց հետո գնաց Վրաստան՝ քրիստոնեությունը քարոզելու: Նրան հաջողվեց բժշկել թագուհուն, նրա զավակին ու թագավորին եւ այդպես ողջ արքունիքին հավատքի բերեց: Նունե կույսը համարվում է Վրաստանի առաջին առաքելուհին: Իսկ երկրորդը՝ Մանեն, ճգնակյաց կյանքով ապրելով, մահացավ Եկեղյաց գավառի Սեպուհ լեռան մի քարայրում: Ըստ ավանդության՝ Լուսավորիչն իր կյանքի մայրամուտին մի տեսիլք տեսավ, որով Տերը պատվիրում է նրան Սեպուհ լեռան քարայրներից մեկում մի սրբի աճյունը հողին հանձնել: Եվ երբ սբ Գրիգորն այդ կողմերը եկավ ու կանչեց կույսին, վերջինս խնդրեց երեք օր հետո գալ՝ պատճառաբանելով իր մերկությունը: Լուսավորիչը երեք օր հետո նրան վախճանված գտավ ու աղոթքով թաղելուց հետո ինքը շարունակեց ճգնել այնտեղ մինչեւ իր վերջին վայրկյանը:

Է դարում Կոմիտաս կաթողիկոսը կառուցեց Ս. Հռիփսիմեի հոյակապ տաճարը եւ գրեց *«Անձինք նուիրեալք»* շարականը, որը հայ հոգեւոր երգի գոհարներից մեկն է:

632 թ. Գայանեի նահատակության վայրում Եզր կաթողիկոսի ձեռնարկումով Ս. Գայանեի անվամբ կառուցվում է մի գեղեցիկ տաճար: ԺԸ դ. կույսերի բնակության վայրում՝ հնձանում, կառուցվում է Ս. Շողակաթ վանքը՝ Նահապետ Եդեսացի կաթողիկոսի օրոք: Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքն ունեցավ իր քարեղեն մարմնացումը՝ երեք տաճարներով: Հնձանում նահատակված կույսերի հիշատակի եկեղեցին անվանվեց Շողակաթ, քանզի, ըստ Լուսավորչի վկայության, լույսի շող կաթաց նրանց աճյուններին:

Այս տարի Հայոց Եկեղեցին Հռիփսիմյանց կույսերի հիշատակը տոնում է հունիսի 8-ին:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*



# ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ ԱՍՈՂԻԿ

## (953/958-1041/1049)

*Սկիզբը՝ թիվ 6-9*

Հայ ժողովրդի համար կործանարար էր հողից կտրվելը, որ արվում էր պատերազմների ժամանակ, իսկ Բյուզանդիայի համար, հայազգի Մորիկից սկսած, դա հայակործան պետական ծրագիր էր, որ, ի վերջո, ամայացրեց բուն Հայաստանը: Հունաց Վասիլ ինքնակալն իր թագավորության մեջ ապրող հայերին վերաբնակեցնում է Մակեդոնիայում՝ բուլղարների դիմաց, որպեսզի նախ՝ շենացնեն իրենց երկրի այդ մասը, եւ ապա՝ պատերազմեն բուլղարների դեմ, որոնց աջակիցները ռուսներն էին: Քաղկեդոնական քահանաներն իրենց հերթին ուժեղացնում են կրոնական հալածանքը հայերի հանդեպ: Այստեղ սրվում են դավանաբանական հարցերը, եւ Ասողիկն անցնում է բանակռվի՝ ընդդեմ քաղկեդոնական Եկեղեցու պահանջների:

Զետեղել է հայոց Խաչիկ վեհափառի պատասխան նամակը Սեբաստիայի մետրոպոլիտին, որի մեջ շարունակվում է Քաղկեդոնի ժողովի բանավեճը. «Ավա՜ղ անմտություններից, առավել եւս անգետ մոլորություններից համար. քանզի պարտավոր էիք երկու բնությունների մեջ մեկ այլ բնություն եւս փնտրել...» (III, ԻԱ, էջ 263): Այս նամակը մի ամբողջ ընդդիմախոսություն է՝ հաստատելու «Քրիստոսի մեկ՝ աստվածային կամքը»: Հիշատակվում են Եկեղեցու հայրերի՝ Գրիգոր Նյուսացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, բերանը ոսկի Հովհանի (Հովհան Ոսկեբերան) եւ այլոց աշխատությունները: Այս նամակը երրորդ հանդեսի ամենածավալուն գլուխն է:

Սրանից հետո Սեբաստիայի մետրոպոլիտն ամոթահար է լինում: Իսկ երբ Վասիլը բուլղարներին որպես հարսնացու ուղարկում է պալատի սպասուհիներից մեկին եւ ոչ թե իր քրոջը, որին պահանջել էին բուլղարները, նրա վրա չոր ցախ են լցնում եւ հրատոչոր անում: Սեբաստիայի մետրոպոլիտն այսպես մեռնում է «չարաչար մահվամբ»:

Այստեղ կա մեկ ուրիշ հետաքրքրական դրվագ: Այն, որ բուլղարների թագավորները հայոց ազգից էին, Դերջան գավառից եւ կոչվում էին Կոմսածագեր: Նրանցից մեծի անունը Սամուել էր: Նրանք Մակեդոնիա տարված հայերից էին, ո-րոնք անցնում են բուլղարների կողմը: Բուլղարների թագավորը կուրտ (ներքինի) էր, որին բռնում է Վասիլը: Դրանից հետո եղբայրներն իշխում են Բուլղարիայում եւ հաղթական պատերազմներ մղում հույների դեմ (III, ԻԲ):

Ավելի ուշ Վասիլ ինքնակալը գրավում է բուլղարների Վառնա քաղաքը եւ «Տարոնի իշխանի որդի Գրիգոր Մագիստրոսին զորքերով թողնում է այնտեղ՝ բուլղարներին հսկելու: Նրա հետ մեկտեղ [թողնում է] նաեւ Հանձիթից Հաբելի որդի Սահակին, որը բազում ճակատամարտեր է տալիս բուլղարների դեմ...» (III, ԼԳ, էջ 321), բայց նրանք պատերազմներում սպանվում կամ բանտարկվում են: Այս Գրիգոր Մագիստրոսը Գրիգոր Մագիստրոս Պահլավունին չէ:

Ասողիկը մտաբերում է Կոստանդնուպոլսի երկրաշարժը, որ եղավ 989 թ., եւ որից տուժեց նաեւ Սբ Սոփիայի տաճարը: Տաճարը նորոգելու էր հրավիրված նաեւ «Հայոց քարագործ ճարտարապետ Տրդատը, որը հանճարի իմաստությամբ պատրաստելով կառույցի կաղապարը՝ տալիս է շինվածքի նախագիծն ու կառուցման սկիզբը դնելը, որի հիման վրա կառուցվեց առավել գեղեցկատեսք, քան նախկինն էր» (III, ԻԷ, էջ 310):

Նույն կերպ նա պատկերում է 995 թ. Չորրորդ Հայքում տեղի ունեցած երկրաշարժը. «Մարգարեների փոխարեն Աստված որմերին ստիպեց աղաղակել եւ առաքյալների փոխարեն լեռները ձայն արձակեցին, որպեզի անզգամները ճանաչեն եւ հասկանան Աստծու ահավոր զորությունը <...>, քանզի բարձրագահ լեռները հերձվեցին, քարաժայռերը պատռվեցին, բոլորովին ցամաք տեղերում աղբյուրներ ժայթքեցին, մշտահոս գետերի ակունքները ցամաքեցին, անհայտացան, դաշտերը հիմքից ծածանվում էին, սարերը կարծես միմյանց առջեւ խոնարհվում էին, բարձրացած փոշին ծխի նման ծածկեց երկնքի երեսը» (III, ԼԶ, էջ 324): Նկարագրությունը դեռեւս շարունակվում է՝ բնական աղետի կապակցությամբ ի հայտ բերելով պատմիչի՝ նույնքան բնական գրական-բանաստեղծական ձիրքը:

**Հիշատակարանը** վերնագրված է՝ «Ավարտված սույն հիշատակարանի փառատրական վերջին խոսքը»: Ադամից մինչեւ իր օրերը, նրա հաշվարկով, 6282 տարի է, իսկ Քրիստոսի խաչելությունից՝ 972 տարի: Հայոց տոմարով դա 453 թվականն է, այսինքն՝ 453+551=1004 թվականը:

Նա վերստին հիշում է հայոց հայրապետ տեր Սարգիսին, որի պատվերով էլ գրել է սույն աշխատանքը, եւ որի հանդեպ պատկառանքը նրան մղում է խոստովանելու. «Հրամանը կատարելը վեր էր, քան իմ կարողությունն է, սակայն, հնազանդության օրենքին ենթարկվելով, իմ աղքատիմաց խոսքերով սույն հիշատակի գիրը շարադրեցի»: Այնուհետեւ, դիմելով վեհափառին, շարունակում է. «Խոնարհությամբ ընդունիր այս չնչին ձեռնարկությունս, որ քեզ եմ ձոնում եւ ամենայն մանկանց եկեղեցու, որպեսզի սիրահոժար հոգով անտես առնես սխալանքներն ու հանդգնությունն իմ: Մանավանդ որ հարածուփ շրջագայությունները եւ եկեղեցու հանապազօրյա հոգսերը, Տեր իսկ հրամանի համաձայն, թույլ չէին տալիս մտքերս շարահարել խոսքերի առավել պատշաճ հորինվածքով. դրա համար էլ, ահա, կրում եմ փառաբանությունն ու անարգանքը, գովաբանությունն ու պարսավանքը մեր ծանրախորհուրդ եւ խստապահանջ ազգի կողմից, բարեմիտ եւ բղջախոհ մարդկանցից, որոնցից յուրաքանչյուրին էլ հասնելու է հատուցումն Աստծու արդար դատաստանի» (էջ 347-348):

Վերջում հայցում է հայրապետի խնամակալությունն ու ընթերցողների եղբայրական սերը, որպեսզի իրեն էլ հիշեն Աստծուն ուղղված ջերմեռանդ աղոթքներում, արդարահայաց գնահատությունների մեջ եւ արդարախոս մաղթանքներում...

### ԱՐՎԵՍՏԸ

Ասողիկն արագագիր պատմիչ է, խոսքը շատ շարժուն է, ներգործող, իսկ երբեմն՝ պատկերավոր ու գեղարվեստական: Իր ոճի մասին ինքն է գրում. «Սակայն Դավիթ մեծ կյուրապաղատի մահվան համար պարտավոր էի երկարաշունչ ողբով վիպասանել, եթե չցանկանայի կարճել խոսքիս երկարաբանությունը, քանզի ոչ թե չարախոսելու ժամանակներ են, այլ ճշմարիտ հիշատակներ շարադրելու» (III, ԽԳ, էջ 336): Սա գրելու մի ամբողջ տեսություն է, յուրահատուկ քերթողական արվեստ՝ ars poetica:



*Շարունակությունը՝ էջ 6*

**Մետրոպոլիտ Անտոնի ՍՈՒՐՈԺՍԿԻ**

# ՄԵՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՀԱՐՈՒՑՅԱԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՆԴԻՊԵԼՆ Է

*Սկիզբը՝ թիվ 8*

Հնարավոր է՝ սա էլ բավական է, որ կարողանանք ըմբռնել Հարության էական հայեցակետերից մեկն ու դրա ողջ նշանակությունը, սակայն եթե մենք հիմա անդրադառնանք 12 առաքյալներին, ապա կտեսնենք, որ Հարությունը շատ ավելին է նշանակում, քան դա հնարավոր է: Տասներկու առաքյալների փորձառության մեջ Քրիստոսի մահը խաչի վրա ավելի մեծ ու նշանակալի իրադարձություն էր, քան միայն ընկերոջ, առաջնորդի ու ուսուցչի մահը: Նրանք չէին ողբում միայն սիրելի Ընկերոջ կորուստը, Առաջնորդի պարտությունը, Ում հաղթանակին չէին կասկածում: Եթե ուշադիր կարդանք Ավետարանը, կտեսնենք, թե ինչպիսին էին Տիրոջ ու առաքյալների հարաբերությունները, ինչպես էին դրանք կամաց-կամաց սերտանում Ուսուցչի ու աշակերտների միջեւ: Նրանք՝ աշակերտները, Տիրոջ շուրջը համախմբվեցին՝ ոմանք հավատով, ոմանք էլ՝ վերապահությամբ («Կարելի՞ է, որ Նազարեթից մի որեւէ լավ բան դուրս գա» (Հովհ. Ա 46): Անցան շատ վարանումների ու կասկածների միջով եւ ամբողջովին համակվեցին ոչ միայն նրանով, թե ինչ էր քարոզում Քրիստոսը, այլեւ Նրա ողջ անձով: Քրիստոսը դարձավ նրանց կյանքի բացարձակ կենտրոնը: Երբ Քրիստոսը դիմեց նրանց՝ հարցնելով, թե չե՞ն կամենում թողնել Իրեն, Պետրոսը պատասխանեց, որ այլեւս ոչ ոքի մոտ գնալ չեն կարող, որովհետեւ միայն Ինքը՝ Քրիստոսն է, որ խոսում է հավիտենական կյանքի մասին...

Մենք տեսնում ենք մի խումբ մարդկանց, ովքեր հավաքվել էին շուրջը Նրա, Ով հենց Ինքը հավիտենական Կյանքն է՝ հայտնված անցավորի, ժամանակավոր աշխարհի մեջ, ուր մարդկային մեղքը մահ ու փտում է բերում: Եվ ահա մարդկանց այդ խումբն այլեւս չէր կարող ապրել առանց Քրիստոսի հետ ունեցած մերձավորության՝ եւ ոչ թե նրա համար, որ նրանց միավորում էր սիրո, բարեկամության, օրինապահության պարագան, այլ որովհետեւ նրանք այդ մտերմության, այդ կապվածության մեջ ապրել էին հավիտենական Կյանքը, անձնական հարաբերություններից դուրս մի նոր՝ անթոլոգիական, էականական չափումը: Եվ այդ չափումը ոչ թե առավել ամբողջական, առավել հարուստ, առավել գեղեցիկ կյանքն էր, այլ այն կենսակերպը, որը նրանց նվիրեց Քրիստոսը:

Եվ երբ Քրիստոսը մահացավ խաչի վրա՝ մերժված, մատնված նրա կողմից, ով դուրս էր այդ սիրո շրջանակից, այդ աստվածային խորհրդից, էությունից, այդ մարմնացած, գործուն, այլակերպված սիրո ոլորտից, խոսքը միայն ընկերոջ, դաստիարակի մահվանը չէր վերաբերում. դա շատ ավելի խոր ողբերգություն էր: Եթե այն ողջ լիությամբ, որ ներկայացնում էր Իրենից Քրիստոսը, կարող էր մահանալ խաչի վրա, նշանակում է մարդկային ատելությունն ավելի զորեղ էր աստվածային Սիրուց. մարդկային ատելությունը հաղթեց աստվածային Սիրուն, Քրիստոսին դուրս տարավ մարդկային բնակավայրից, մերժեց Նրան եւ սպանեց Գողգոթայում: Եվ այդ աստվածային Սիրո մահվան հետ մեկտեղ, այդ մերժումից կորավ նաեւ մարդկության հավիտենական կյանքը. այն դեն նետվեց: Աստվածային Սերն առաջարկվեց մարդուն՝ միաժամանակ թե՛ որպես նախատինք եւ թե՛ որպես մեծագույն հույս, եւ այդ Սերն էլ հենց մերժվեց: Իսկ ի՞նչ է մնում այդ ժամանակ մարդուն: Միայն այն, ինչը նա միշտ ունեցել է՝ խավարը, ուր պայքար է գնում առանց Քրիստոսի, իրիկնամուտ, որում մի փոքր բարություն կա, մի փոքր էլ՝ ատելություն եւ շատ ու շատ անտարբերություն, իրիկնամուտ, որում մարդիկ օտար են միմյանց, հարաբերությունները՝ բարդ, մտերմությունները՝ փխրուն, եւ որոնք մշտապես անհետանում են...

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ այդ մարդկանց հետ, որոնք մեկ էին Քրիստոսի հետ, որոնք իրենց սրտերում էին կրում կենդանի Աստծո ներկայությունը: Եվ ահա այն, ինչ մնաց նրանց, համբերությամբ դիմանալն էր, իրենց գոյությունը քարշ տալը. նրանց համար այլեւս կյանք չկար: Այն ժամանակներից ի վեր, երբ ճաշակեցին հավիտենական Կյանքը, ժամանակավոր փայլուն թվացող այս կյանքը, որն ավարտվում է մարմնական մահով ու փտումով, որոնք էլ տանում են դեպի վերջնական պարտության, վերադարձ հողին, հետայսու այդ կյանքն արժե կոչել ոչ թե կյանք, այլ մահվան շեմ: Այդ պատճառով էլ, երբ Սուրբ Գիրքը պատկերավոր թե ուղղակիորեն հասցնում է մեր գիտակցությանն այն, որ Քրիստոսի մահվան մեջ մենք բոլորս մեռանք այն չափով, որ չափով նմանվել էինք Նրան եւ Նրա հետ դարձել մեկ եւ որ Նրա Հարությամբ վերադառնում ենք Կյանք Նրա հետ միասին, ապա խոսում է միանգամայն որոշակի եւ իրական բանի մասին: Դրանում առկա է մի բան. այն, որ մենք հասու չենք այն ողբերգականությանը՝ խավարով լեցուն, որը տիրել էր առաքյալներին: Մեզ դա հասու չէ միանգամայն պարզ ու ակնհայտ պատճառով. Ավագ շաբաթվա մեջ, մենք որքան էլ ձգտենք ամբողջովին տրվել այդ ողբերգությանը, միեւնույն է, մենք գիտենք հաստատ, որ երեք օր հետո պիտի տոնենք Հարությունը: Մենք չենք կարող մեր հիշողությունից ջնջել Քրիստոսի հարությունը, եւ ոչ միայն



նրա համար, որ տարեցտարի մենք կրկին ու կրկին ապրում ենք դա եւ անզոր ենք մոռանալ, այլեւ, որպես Քրիստոսի Մարմնի անդամներ, որպես քրիստոնյաներ, ընդգրկված լինելով Քրիստոսի Լիության՝ Եկեղեցու մեջ, մեր մեջ կրում ենք այդ հավիտենական Կյանքը՝ վկայելով, որ Ավագ շաբաթվա խավարն արդեն հաղթահարված է: Այն հեռացվել է հենց մեր միջից. մեր ներսում այլեւս լույսն է վառվում, այլեւս ներկա է կյանքը, որի հաղթանակը, թեպետ, դեռեւս փոքր-ինչ ուշանում է: Նույնիսկ Ավագ շաբաթվա բուն սրտում մենք անկարող ենք չհիշել գալիք Հարության մասին:

*Շարունակելի*

*Թարգմ.՝ Ռուզաննա ԱՐՈՅԱՆԻ*

Կից սենյակում

# ՀԱՅՀՈՅԵԼՈՎ՝ ԱՆԱՐԳՈՒՄ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ

**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**

**- Սբ Ավետարանն Աստվածորդու շուրթերով բազմիցս ուսուցանեց բերանը եւ լեզուն գործածել միայն աղոթքի, օրհնության, մխիթարության եւ բարի խոսքերի համար: Մարդ արարածի լեզուն, սակայն, այսօր էլ չի դադարում հնչեցնել հայհոյություն, անեծք ու պղծություն...**

- Սուրբ հայրերն ասում են, որ հայհոյող մարդն իր բերանը դժոխք է դարձնում, իսկ նրա բնակիչն էլ սատանան է, որը տեսակ-տեսակ պիղծ խորհուրդներով նրան տանում է կործանման: Եվ ի՞նչը կարող է ավելի ցավ պատճառել, քան այն, որ երեխաները շատ հաճախ մեծանում են հայհոյանքների սովորական դարձած տարափի ուղեկցությամբ, ինչը մեծահասակներս «սիրահոժար» ուսուցանում ենք նրանց: Հայհոյանքի ուսուցման օջախներ կարող են հանդիսանալ փողոցը, որոշ «հեղինակավոր ուսուցիչներ» եւ, ցավոք, որոշ ընտանիքներ: Այո՛, ընտանիքներ կան, որտեղ մանուկների բերանը պղծելը մեծերի համար ուղղակի զվարճանք է:

Եղել են դեպքեր, երբ հայհոյող մարդիկ, ի պատասխան իմ հանդիմանանքի, փորձել են արդարանալ. «Ախր, տե՛ր հայր, տես՝ ինչ է արել այս մարդը, ո՞նց չհայհոյեմ»: Ասում եմ. «Ե՛կ, մի պահ վերլուծի՛ր հայհոյանքիդ խոսքերը եւ առաջինը դու ի՛նքդ քեզնից կզզվես՝ քո իսկ բերանից դուրս եկած նման պիղծ խորհուրդների համար, որ մարդու մտքով անցկացնելն անգամ մեղք է, էլ ո՛ւր մնաց բարձրաձայնելն ու մթնոլորտն այդ պղծությամբ լցնելը...»: Շատերը, բարեբախտաբար, հասկանում են: Բայց ոմանք շարունակում են դիմադրել՝ իբր այդ իմաստով չեն հայհոյում: Լսողի համար, սակայն, իմաստի փնտրտուքի հարց չկա՝ ուղի՞ղ իմաստով էր հայհոյանքը, թե՞ մեկ այլ. լսողի համար այն միանշանակ պղծություն է, ինչը հաճախ գայթակղության առիթ է դառնում:

**- Տե՛ր հայր, ոմանք հայհոյում են տրտմությունից: Ասենք՝ մեկը նեղության մեջ է եւ չի կարողանում մխիթարություն գտնել: Եվ քանի որ չունի մխիթարության աղբյուր, սկսում է հայհոյել ու անիծել մարդկանց, իր բախտը, վերջապես՝ Աստծուն...**

- Երբեք չպետք է մոռանալ, որ չարը եւ բարին մշտապես ներկա են մեր կյանքում: Ե՛վ հրեշտակները, ե՛ւ դեւերը հարատեւ գործում են: Ու երբ մեկը փորձության մեջ է, անմիջապես դեւերն իրենց «ծառայությունն» են առաջարկում. «Մի լավ հայհոյի՛ր, մի պիղծ բա՛ն ասա, մի լավ անիծի՛ր, որ հանգստանաս»: Բայց սա դիվային ճանապարհ է, ինչը մարդու ուսերին նորանոր մեղքեր բարձելով՝ վերջնականապես հալածում է խաղաղությունը նրա հոգուց: Սակայն նույն պահին չէ՞ որ Աստծու հրեշտակներն են այցելում ու շշնջում քաղցրալուր. «Բարկացա՞ծ ես, տրտմա՞ծ, հուսահա՞տ ես, վերցրո՛ւ Սուրբ Գիրքը, ընթերցի՛ր, վե՛ր կաց, գնա՛ եկեղեցի, Սուրբ Հոգով, ամբողջ սրտով ու էությամբ Աստծուն աղոթի՛ր, ծնկի՛ արի Տիրոջ առաջ, մի զույգ մոմ վառի՛ր, բա՛ց արա սիրտդ Աստծու առաջ ու դրանո՛վ հանգստացիր ու խաղաղվիր»:

Ընտրությունը մարդունն է. եթե լսեց Սուրբ Հոգու մեղմիկ ձայնը, անսաց Աստծու խոսքին ու խոնարհվեց Նրա առաջ, ուրեմն կստանա իրական մխիթարություն ու խաղաղություն...

**- Իսկ սաստիկ վիշտ ունեցողնե՞րը... Չէ՞ որ նման իրավիճակներում անհամեմատ թույլ է ինքնավերահսկումը:**



- Գիտե՞ք, որպես կանոն՝ նեղության մեջ մարդիկ հիմնականում իրենց դրսեւորում են այնպիսին, ինչպիսին կան իրականում: Եթե մարդը, մինչեւ վշտի ու նեղության «այցելությունը», իրական Բարու հետ չի առնչվել, Աստծու հետ կապ չի ունեցել, նա կարող է նաեւ անիծել Աստծուն: Առաքյալն ասում է. «Առե՛ք Աստծու սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին» (Եփես. Զ 13): Չար օրում, այսինքն՝ փորձության պահին, վշտի պահին: Եթե մինչեւ այդ վիճակը մարդը հագել է «Աստծու սպառազինությունը», նույնն է թե՝ աստվածպաշտություն, խոնարհում, սեր առ Արարիչը եւ Աստծու սուրբ երկյուղ, ուրեմն տվյալ իրավիճակը եւս կօգտագործի՝ Աստծուն առավել պաշտելու, առավել կառչելու Տիրոջ փեշից, առավել զորանալու Սուրբ Հոգով: Փոթորկի ժամանակ, ասում են, արծիվներն ավելի բարձր են ճախրում՝ հասնելով այնպիսի բարձունքների, որոնց չէին հասել երբեք: Միեւնույն ժամանակ փոթորիկը կարող է կործանել նրան, ով ընթացավ ներքեւ, այսինքն՝ իջավ դեպի նյութը՝ իր փրկությունը որոնելով այնտեղ: Այսինքն՝ ընտրությունը դարձյալ մարդու ձեռքին է: Վստա՛հ եղեք՝ դիվական տրտմության ակն ու աղբյուրը աշխարհական մտածողությունն է: Եթե մտածում ես, որ մահը բացարձակ չարիք է, եթե չես հավատում Քրիստոսի հարությանը եւ հավիտենական կյանքին, ուրեմն մահը քեզ համար դառնում է գոյաչնչում եւ վերջն ամենայնի: Հետեւաբար պիտի չարանաս, հայհոյես ու անիծես, տրտմության ու հուսահատության գերի դառնաս: Իսկ երբ ունես հույսը, ունես հավատք, որ Քրիստոսը հարություն առավ, որ մեռելները հարություն պիտի առնեն, ուրեմն հավատում ես, որ այս կյանքով ու մահով ամեն ինչ չի ավարտվում, որ մեր Տերը խաչվելով, Նրա առաքյալները եւ բազում սրբեր, նահատակվելով եւ այս կյանքը կարծես թե չվայելելով, իրականում դուրս եկան եւ մտան հավիտենական կյանք՝ վայելելու հույսով, եւ «այդ հույսը նրանց ամոթով չի թողնելու», որովհետեւ սուրբ է այդ հույսը, ինչպես որ սուրբ է հույսի հիմքն Ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Եվ եթե հավատում ես Տիրոջ ավետիսին, սիրելիիդ մահն էլ, վստահ ես, չարիք չէ, այլ ժամանակավոր մի բաժանում:

**- Որպես կանոն՝ հայհոյանքի, պղծախոսության «շտեմարաններ» են համարվում բանակը եւ կալանավայրերը: Սրանք հիմնականում տղամարդկանց հասարակություն են ներկայացնում: Ա՞յդ է պատճառը:**

- Ե՛վ այո, ե՛ւ ոչ: Չգիտես ինչու ընդունված է կարծել, որ հայհոյելը տղամարդկանց «մենաշնորհն» է, ավելին՝ էլ ի՞նչ տղամարդ, եթե չի հայհոյում: Զինվորական ծառայությանս ընթացքում այս թեմայով շատ եմ զրուցել թե՛ զինվորների, թե՛ հրամանատարական կազմի հետ: Հաճախ լսում էի այսպիսի խոսքեր. «Եթե չհայհոյեմ, ինձ բանի տեղ չեն դնի»: Այս մտահոգությունն իրականում սատանայի խաբկանք է, որովհետեւ վստահ եմ, զինվորն ազդվում է ոչ թե հայհոյությունից, այլ հրամանատարի վճռականությունից ու թերեւս՝ խստությունից, ինչը ոչ մի կապ չունի պղծախոսության հետ: Եթե դու ուզում ես մեկին կարգ ու կանոն սովորեցնել ու դա անում ես ստորացնելու ճանապարհով, դու նրան ոչ թե դաստիարակում ես, այլ կոտրում ու ոչնչացնում, եւ մարդը, թերեւս, իր ներսում քո թշնամին է դառնում, եթե անգամ ստիպված է քո հրամանը կատարել: Այստեղ լիովին բավական է արդար բարկությունը:

Լինում են ավելի անհեթեթ իրավիճակներ, երբ հայհոյելու որեւէ դրդապատճառ չկա, բայց մարդը հայհոյական խոսքեր է ասում կամ նույնը ստիպում է անել ուրիշներին:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ ԱՍՈՂԻԿ

*Սկիզբը՝ էջ 5*

Արագագիր եւ ճշմարտագիր լինելը բնավ չի խանգարում խոսքի գեղարվեստական հագեցվածությանը: Դա արտահայտվում է ե՛ւ պատկերավոր խոսքով, ե՛ւ նախանշանների գիտությամբ, ե՛ւ հրաշապատումներով: Հավատին դեմ գնացող հերոսներից մեկին նկատի ունենալով՝ գրում է. «Մանաճիհրը Հերովդեսի նման արագորեն սատակեցավ, եւ աշխարհն այն զրկվեց պտղաբերությունից, երկինքն էլ նրա վրա պղինձ դարձավ. ծովն էլ հակառակվելով՝ բարձրացավ ծածկեց անդաստանների սահմանները» (II, Ա, էջ 110):

Պարսից Դենշապուհ, Վարազդատ մարզպանների իշխանության դժվարին տարիները նկարագրելով, երբ հայերին ուզում էին վերադարձնել կրակապաշտության, որի պատճառով «չափազանց շատ մարդամահեր եղան», գրում է. «Ապա սկսեցին երկնքից հրափայլ եւ արնագույն ահեղ նշաններ երեւալ, որ, երկարաձգվելով հյուսիսային կողմից, անցնում էին արեւմուտքից մինչեւ արեւելք, սյունաձեւ ցոլանքով ամեն գիշեր՝ ութ ամիս շարունակ» (II, Բ, 128):

Մեկ այլ տեղ, հիշելով Աշոտ պատրիկին, գրում է. «Սրա հենց առաջին տարում երեւաց վարսավոր (իմա՝ գիսավոր) աստղը, որի ետեւից սյունաձեւ շողարձակում էր ճաճանչների ցոլքը, եւ դա եղավ նշան սովի, սրի ու մեծամեծ սասանումների» (II, Դ, էջ 173):



Ոգեշունչ եւ ճարտասանական բնույթ ունի երրորդ հանդեսի Ա գլուխը, որը վերնագրված է «Խոսք նախասացության»: Խոսքի գեղարվեստական գրավչությանը նպաստում է բանաստեղծական պատկերավորությունը: Աբաս Բագրատունին Կուր գետի մեջ տապալում է աբխազների Բեր իշխանի ասպատակներին, «որոնց համար հուղարկավոր ջուրն է դառնում» (III, Է, էջ 223): Մեկ այլ տեղ Վարդ Սիկլառոսը (Վարդաս Սկլերոս) հայոց զորքերով չորս տարի ճակատամարտում է հունաց Վասիլ թագավորի դեմ՝ «հասնում է մինչեւ Բյութանիա՝ արյան ճապաղիքով լցնելով այդ ամբողջ աշխարհը» (III, ԺԴ, էջ 244): Այս Վարդը վերջում երկաթյա կապանքների մեջ հայտնվում է Բաղդադի բանտում, որը, ըստ Ասողիկի, «նույն Բաբելոնն է»:

Մեկ այլ տեղ, պարսկական բանակի բազմամարդությունը նկատի ունենալով, գրում է, թե ինչպես էին հայոց զորքերը հարձակվում «պարսկական բանակի անտառախիտ բազմության վրա» (III, ԽԱ, էջ 334):

Շատ բանաստեղծական է հիշատակարանի մուտքը: Աշխատանքն ավարտած մարդու երջանկությամբ նա խորհրդածում է. «Անսահման են սքանչելագործ Աստծու կախարդական հրաշագործությունների ակունքներն իրենց բազմահազար բոցեղեն ճառագայթումներով՝ իմաստուն եւ բանական ազգերի համար: Ինքը՝ Է-ն, էությունից արարչագործեց ծայրագույն լույսը՝ մշտածավալ ծագողությամբ՝ անհասանելի եւ անիմանալի մնացած բոլոր իմաստնականների համար:

Այս նույն ձեւով էլ աներեւույթներին եւս բացահայտ կերպով պայծառացրեց տեսանելի արեգակով, քառահոլով եղանակներով եւ օրաբեր ժամերով...» (էջ 346):

Պատկերավոր նկարագրություն է Իբն Խոսրովի կողմից քաղաքներից մեկի գրավումը: Քաղաքը չի հանձնվում: Իբն Խոսրովը յուրաքանչյուր տնից, որպես հարկ, պահանջում է մեկական շուն: Շների վրա նավթ է լցնում (Ասողիկի մոտ՝ նաւթ) եւ բաց թողնում, որոնք էլ փախչելով գնում եւ հրդեհում են եղեգնածածկ տանիքով տները: Սա համարում է «իմաստուն քայլ» եւ նմանեցնում Սամսոնի եւ Ալեքսանդրի արածներին: Առաջինը չորս հարյուր աղվեսներով թշնամու խոզանը հրդեհեց, մյուսը՝ փայտակերտ ապարանքները՝ թռչուններով:

Ասողիկը գիտի իր խոսքի գինը, գիտի գնահատության չափը եւ, որպես սրբակրոն պատմիչ, ջանում է արդարամիտ լինել, կողմնապահություն չանել:

Նրա կենդանի ներկայությունն ու վերաբերմունքը գրքում թեեւ հասցված են նվազագույնի, բայց կան: Օրինակ՝ խոսելով Սմբատի եղբայր Գագիկի թագավորելու մասին, գովաբանելով նրան՝ շարունակում է. «Ավա՜ղ, մի չար դիպվածի համար, որն արգելում է ինձ [Նրա համար] գովեստի ավելի շատ խոսքեր շռայլել այս պատմության մեջ» (III, Լ, էջ 316),- այդ «չար դիպվածը» նա թեեւ չի բացահայտում, բայց ակնհայտ է, որ իր դրական կերպարներին ցանկանում է տեսնել անաղարտ ու վեհ:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն իր ուրույն տեղն ունի հայ պատմագրության մեջ, հատկապես՝ որպես իր ժամանակի ականատես ու վկա, նաեւ որպես պատմագրության արագագիր, փաստական ոճի ներկայացուցիչ ու պատկերավոր խոսքի վարպետ:

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԸ



Ապրիլի 24-ը պատմության բերումով հայ մարդու համար դարձել է նվիրական մի օր, երբ անկախ մեր կարգավիճակից, տարիքից, հասարակության մեջ ունեցած դիրքից, կուսակցական եւ կրոնական պատկանելությունից, ոգեկոչում ենք Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների խնկելի հիշատակը, աղոթում նրանց հոգիների հանգստության համար, եւս մեկ անգամ յուրովի ապրում այդ ողբերգությունն ու ցավը եւ փորձում գտնել մեր բազում եթեների եւ ինչուների պատասխանը: Այդ օրը պատարագներ են մատուցվում հայոց բոլոր եկեղեցիներում, կատարվում հոգեհանգստյան կարգ: Սովորաբար նմանատիպ արարողությունները թե՛ մայր հայրենիքում եւ թե՛ Սփյուռքի հայկական գաղթօջախներում կատարվում են հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողների կամ խաչքարերի մոտ: Այս առումով բացառություն չէ նաեւ հնդկահայ համայնքը: Ձեւավորված ավանդույթի համաձայն՝ հնդկահայերն այդ օրը հավաքվում են Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու հյուսիսային պատի տակ՝ հայոց ցեղասպանության հիսնամյակի առիթով կանգնեցված հուշարձանի մոտ, ուր եւ կատարվում է հոգեհանգստյան արարողությունը: Այս հուշարձանի եւ Մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված տոնակատարությունների պատմության մանրամասները պահպանվել են ժամանակի Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ Հայկազուն արք. Աբրահամյանի երկհատոր օրագրում, որը պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատանը: Սրբազան հայրն ամեն օր բարեխղճորեն գրառումներ է կատարել իր այցերի, գործերի, հնդկահայ համայնքում եւ Հայոց մարդասիրական ճեմարանում կատարված դեպքերի եւ միջոցառումների մասին:

Հեռու լինելով պատմական մեր հայրենիքից եւ հիմնականում ձեւավորված լինելով ցեղասպանությունը չապրած եւ իր մաշկի վրա չզգացած ջուղայեցիներից՝ Հնդկաստանում գուցե այնքան էլ սրությամբ չէր ընկալվում եւ այսօր էլ չի ըմբռնվում մեր ժողովրդի այդ ողբերգությունը: Հայկական ջարդերի սեւ օրերին Հնդկաստանում բարեզարդվում էին մեր եկեղեցիները, եւ համայնքն ապրում էր իր բնականոն հունով:

Այսպես՝ Մեծ եղեռնից հետո Գեւորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Թորգոմ արք. Գուշակյանը նշանակվում է Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական նվիրակ: Նա մեկնում է Հնդկաստան եւ Ծայրագույն Արեւելքի հայկական համայնքները՝ Արեւելյան Հայաստանում թուրքական յաթաղանից մազապուրծ եղած, կարիքի եւ դժբախտության մեջ գտնվող բազում հայորդիների համար գումար հանգանակելու նպատակով: Թորգոմ պատրիարքն իր «Հնդկահայք» հուշագրության մեջ պատմում է, թե ինչպես էին հնդկահայերն իրենց առատաձեռնությամբ գումարներ նվիրաբերում աղետից տուժած իրենց հայրենակիցների համար:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառը Մեծ եղեռնի հիսնամյակի առիթով 1964 թ. օգոստոսի 17-ին գրած կոնդակում հորդորում է ապրիլի 24-ին Հայ Առաքելական Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր եկեղեցիներում կրոնական հատուկ արարողություններ, հոգեհանգստյան պաշտոններ, հուշ-երեկոներ եւ հավաքույթներ կազմակերպել՝ նվիրված հայոց եղեռնի ոգեկոչմանը: Անշուշտ, այս ամենին անտարբեր չէր կարող մնալ նաեւ հնդկահայ համայնքը: Ժամանակին Հայկազուն արք. Աբրահամյանը, նկատի ունենալով Վեհափառ Հայրապետի վերոգրյալ կոնդակը, 1965 թ. փետրվարի 10-ին ժողովի հրավեր է ուղարկում Կալկաթայում գործող հայկական կազմակերպություններին եւ միություններին: Ժողովը տեղի է ունենում փետրվարի 23-ին Հայոց մարդասիրական ճեմարանում, որին մասնակցում է 16 մարդ: Տերունական աղոթքից հետո սրբազան հայրն աղոթում է բյուրավոր հայ նահատակների հոգիների հանգստության համար, ներկաներին բացատրում իրենց հավաքի նպատակն ու շարժառիթները՝ ընթերցելով նաեւ Նորին Սրբության կոնդակը: Կարծիքների փոխանակումից հետո Մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված միջոցառումները հավուր պատշաճի կազմակերպելու համար որոշվում է Հայկազուն սրբազանի գլխավորությամբ 7 հոգուց բաղկացած հատուկ հանձնախումբ ստեղծել: Հանձնախմբի անդամներից էին Կալկաթայի վիճակավոր քահանա Գեղամ աբղ. Զաքարյանը, եկեղեցական վարչության անդամներից մի քանիսը, ինչպես նաեւ Մարդասիրական ճեմարանի տեսուչ Վահան Փոլադյանը: Ժողովում որոշվում է ամեն տարի ապրիլի 24-ին պատարագ մատուցել եկեղեցում: Հայկազուն սրբազանի առաջարկությամբ որոշվում է նաեւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող մի հուշակոթող տեղադրել:

Ժողովից հետո Հայկազուն սրբազանը եւ Վազգեն քհն. Ստեփանյանը ձեռնամուխ են լինում նոր հուշակոթողի գծագրի պատրաստմանը: Փետրվարի 23-ին Մարդասիրական ճեմարանում գումարված ժողովում ցեղասպանության հիսնամյակին նվիրված հանձնախումբը հավանություն է տալիս հուշակոթողի նախագծին: Որոշվում է դրա պատրաստությունը հանձնարարել Ջայփուրի մարմարագործներին: Ժողովականները որոշում են նաեւ ապրիլի 24-25-ին ծրագրվող միջոցառումներին հրավիրել Անգլիկան Եկեղեցու մետրոպոլիտ Լակտասա դը Մել եպիսկոպոսին եւ ասորի քահանա Չատրջիին:

## ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Այդ օրերին, հուշարձանի պատրաստության համար դրամական հանգանակություն կազմակերպելու նպատակով, Հայկազուն սրբազանը կոչ է ուղղում հնդկահայությանը, որտեղ տեղեկացնում է Վեհափառ Հայրապետի կոնդակի, նախատեսվող միջոցառումների եւ հուշարձանի մասին:

«Ազնի՛վ հայորդի: Յուզմունքով յիշէ մեր աւելի քան մեկ ու կէս միլիոն նահատակները, եւ առատաբուխ սրտովդ տուր քո լուման այս սուրբ ձեռնարկի յաջողութեանը համար՝ կատարելով խղճիդ պարտքը հանդէպ նահատակ եղբայրներիդ եւ քոյրերիդ»,- ասվում է Հայկազուն սրբազանի կոչում:

1965 թ. ապրիլի 24-ին՝ առավոտյան ժամը 9-ին, Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում Գեղամ վրդ. Զաքարյանը մատուցում է պատարագ: Էմի Աբգարի դաշնավորած ջուղայական պատարագն է կատարում ճեմարանի արական երգչախումբը: Նույն օրը՝ երեկոյան, Մարդասիրական ճեմարանում սգահանդես է տեղի ունենում, իսկ օրվա խորհրդի բանախոսներն են լինում Գեղամ վարդապետն ու Վահան Փոլադյանը:

Ապրիլի 25-ին՝ կիրակի օրը, կրկին պատարագ է մատուցվում Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցում: Օրվա պատարագիչն էր Հայկազուն արք. Աբրահամյանը: Ականատեսների վկայությամբ՝ եկեղեցին լի էր հայությամբ եւ զանազան հյուրերով. ասես Ավագ ուրբաթ էր, ամեն ինչ սեւ էր՝ վարագույրները, դպիրների շապիկները, տխուր էին նաեւ մարդկանց դեմքերը: «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Գեղամ վարդապետը հանդիսավորապես սբ սեղան է բարձրացնում Վազգեն Ա Կաթողիկոսի՝ Մեծ եղեռնի հիսնամյակին նվիրված կոնդակը, որն ընթերցում է պատարագիչ սրբազան հայրը: Այնուհետեւ Հայկազուն սրբազանը, Հովհաննեսի Ավետարանից վերցնելով «Եթէ ոչ հատն ցորենոյ...» հատվածը, հավուր պատշաճի քարոզ է խոսում:

Ս. խորան է բարձրանում նաեւ Անգլիկան Լակտասա դը Մել եպիսկոպոսը եւ խոսքով դիմում ներկաներին: Նա անդրադառնում է Մեծ եղեռնին, հայ ժողովրդի աննկուն եւ աներեր հավատին: Այնուհետեւ թափորով եկեղեցականներն ու հավատացյալ ժողովուրդը դուրս են գալիս եկեղեցու բակ, ուր Հայկազուն սրբազանի հանդիսապետությամբ կատարվում է հոգեհանգիստ, որից հետո պաշտոնապես բացվում է ցեղասպանությանը նվիրված հուշարձանը:

Այն սբ սեղանի նման եռաստիճան սեղան է, որի վերեւում խաչը գրկած սգավոր մի հրեշտակի քանդակ է: Ներքեւում պատկերված են խարիսխ, խոցված սիրտ, որոնք, ըստ Հայկազուն սրբազանի գրառումների, հավատի, հույսի եւ սիրուց խոցված սրտի խորհրդանիշերն են: Խոցված սրտի ներքեւում պատկերված է նաեւ 7 խաչ, որոնց հաջորդում է հուշարձանի հայերեն եւ անգլերեն լեզուներով հետեւյալ արձանագրությունը.

Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ ՄԵՐՈՑ
ՅԸՆԹԱՑՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա.
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ
ԱՊՐԻԼ-1914-1918
ԿԱՆԳՆԵԱՑ ԶԱՅՍ ՅՈՒՇԱՐՁԱՆՆ ԵՐԱԽՏԱԳԷՏ
ՍԵՐՈՒՆԴ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԿԱԹԱՅԻ

24-4-1965
OUR GLORIOUS MARTYRS
IN GRATEFUL TRIBUTE TO OVER ONE MILION MARTYRS
OF THE ARMENIAN NATION WHO LOST THEIR LIVES
UNDER MOST TRAGIC CONDITIOND DURING THE GREAT WORLD WAR 1914-1918
THIS MONUMENT IS ERECTED BY THEIR COMPATRIOTS IN
CALCUTTA ON 24TH APRIL 1965 IN COMMEMORATION OF THE
FIFTIETH ANNIVERSARY OF THE GREAT NATIONAL TRAGEDY

Պատմական վերոգրյալ փաստերը վկայում են, որ 20-րդ դարի 60-ական թթ. ազգային-եկեղեցական բուռն կյանքով էր ապրում հնդկահայ համայնքը՝ հայաշունչ կալկաթահայությունը՝ սերտորեն կապված լինելով Սուրբ Էջմիածնի եւ հայրենիքի հետ: Այն նաեւ ցույց է տալիս հնդկահայության կյանքում եկեղեցականի ունեցած մեծ դերակատարությունը: Ուրախալի է, որ վերջին տարիներին եւս վերազարթոնք է նկատվում Կալկաթայում, եւ փոքրաթիվ հայությունն անցյալի նման շարունակում է ապրել բնականոն հունով՝ հարգանքի տուրք մատուցելով մեր բյուրավոր նահատակներին եւ նշելով այս կամ այն ազգային-եկեղեցական տոնը:

*Վարդան ՊԵՏՐՈՍՅԱՆ*

# ԱՆԻ. ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Անիի սմբատաշեն պարիսպներից դուրս՝ մոտ 1 կմ հեռավորության վրա, տափարակ դաշտի մեջ երեւում է մենավոր կիսաքանդ մի եկեղեցի: Ժողովրդական ավանդությունն այն Նախրճուն ժամ է կոչում եւ պատմում է, թե քաղաքի արվարձանային հատվածում մի ծեր հովիվ էր ապրում՝ իր բարեպաշտ կնոջ հետ: Կինը հաճախ էր գնում Անիի արքայաշեն եկեղեցիները՝ աղոթելու: Մի անգամ էլ՝ Սբ Զատկի օրը, նրան չի հաջողվել մտնել գագկաշեն Սբ Գրիգոր եկեղեցին, որովհետեւ այն լեցուն էր ազնվականների դասին պատկանող անձանցով: Դառնացած եւ հոգին խոցված հովիվը որոշում է մի գողտրիկ եկեղեցի շինել իր եւ իր կնոջ համար: Եվ կառուցում է այդ փոքրիկ, սակայն իր գեղեցկությամբ առինքնող այս կոթողը:

Իրականում եկեղեցին ոչ թե Նախրճուն ժամ, այլ Հովվի եկեղեցի է կոչվում՝ ի պատիվ այն «քաջ Հովվի», որ Իր գառներին պիտի առաջնորդի դեպի կյանքը հավիտենական, եւ կոթողի ճարտարապետն էլ «Տրդատա ճարտարապետական դպրոցի» հանճարեղ այրերից մեկն է:

11-րդ դարին վերագրվող այս ավերված եկեղեցու հատակագիծն ունի բարդ մի գծանկար, ուր վեցաթեւ աստղը ներգծված է եռանկյունաձեւ որմնախորշերով կտրտված շրջանի մեջ: Երկրորդ հարկը պահվում է վեց կամարալանջով, որոնք միանում են ծածկի կենտրոնում ու ամրացվում փակվող քարով: Սովորականի պես չեն տաշված նաեւ կամարների քարերը, այլ արված են այնպես, որ չորս անգամ ավելի մեծ նույնանման շինություն կարող են պահել: Այս եկեղեցին, որը չափագրել եւ ուսումնասիրել է Թ. Թորամանյանը, զվարթնոցատիպ ձեւերի մի ինքնատիպ վերարտադրություն է. իր աստղաձեւ հատակագծով եւ եռահարկ ծավալով՝ եզակի նմուշներից միջնադարյան Հայաստանի եկեղեցաշինության մեջ, հայ ճարտարապետի պայծառ երեւակայության մարմնացումը (տե՛ս Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա, 1942, Բ 1948: Հարությունյան Վ., Անի քաղաքը, Եր., 1964):



Ո՛չ արտաքին, ո՛չ էլ ներքին կողմերից այն պատված չէ շքեղ զարդաքանդակներով ու պատկերներով, սակայն իր այս պարզության մեջ ավելի է ընդգծվում ճարտարապետական հորինվածքի գեղեցկությունը: Եկեղեցու ներսում մի շիրմաքար կա, սակայն այսօր դժվար է ասել՝ ո՞ւմ սրբակյացի:

Հիրավի, առանց Հովվի եկեղեցու քաղաքամայր Անիի շքեղությունը թերի կլիներ:

*Լուսինե ԹՈՒՄԱՆՅԱՆ*

# ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1801-1830 ԹԹ.
## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ թիվ 8-9*

**գ) 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի 2-րդ փուլը. ռուսական զորքերի հաջողությունները:**

1826 թ. օգոստոսի վերջին Ռուսաստանի Կովկասյան հատուկ կորպուսը համալրվեց Ռուսաստանից ուղարկված թարմ ուժերով, որոնց թվում՝ ավելի քան 2 000 դեկաբրիստ (70 դեկաբրիստ սպա), մեծ թվով բարձրաստիճան սպաներ, այդ թվում՝ մի շարք գեներալներ: Կովկասյան կորպուսի հրամանատարն էր գեներալ Ալեքսեյ Երմոլովը: Նրա օգնականն էր 1812 թ. ռուսների Հայրենական պատերազմում աչքի ընկած հայազգի նշանավոր գեներալ Վալերիան Մադաթովը (Ռոստոմ Գրիգորի Մադաթյան), որը ծնունդով Արցախից էր: Ռուսական բանակն անցավ լայնամասշտաբ հակահարձակման:

1826 թ. սեպտեմբերի 3-ին Շամքորի ճակատամարտում Մադաթովը 2000-անոց զորաջոկատով պարտության մատնեց պարսկական 10000-անոց զորամասին եւ վերագրավեց Ելիզավետպոլը (Գանձակ): Սա ռուսական զորքերի առաջին խոշոր հաջողությունն էր այս պատերազմում: 1826 թ. սեպտեմբերի 13-ին ռուսական 8 000-անոց զորամասը՝ գեներալ Պասկեւիչի գլխավորությամբ, պարտության մատնեց Աբաս-Միրզայի 35000-անոց բանակին: Հոկտեմբերին պարսից զորքերն ամբողջությամբ դուրս էին շպրտվել Արցախից, Շիրակից, Փամբակից եւ Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցած բոլոր տարածքներից:

Հենց այս իրադարձություններով նոր փուլ սկսվեց ռուս-պարսկական այս պատերազմում, որի ելքն առայժմ անկանխատեսելի էր:

Ձմռանը զորքերին հանգիստ տալով՝ 1827 թ. գարնանը ռուսական զորքերը՝ Կովկասյան կորպուսի նորանշանակ հրամանատար գեներալ Իվան Պասկեւիչի ղեկավարությամբ, հանձն առան Երեւանի բերդի գրավման բարդ գործը: Փաստորեն, սա լինելու էր Երեւանի բերդի գրավման 3-րդ փորձը: Առաջին 2 փորձերը կատարվել էին 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում: Նախ 1804 թ. ավելի քան 70-օրյա պաշարումից հետո ռուսներն ստիպված էին լքել բերդի մատույցները: Նույնպիսի ելք ունեցավ 1808 թ. աշնանը բերդի շուրջ երկամսյա պաշարումը:

Հայ շատ գործիչներ գիտակցում էին պատերազմի նշանակությունը իրենց հետագա ճակատագրում, ուստի ամեն կերպ աջակցում էին ռուսներին: Ամենամեծ օգնությունը եղավ կամավորական ջոկատների կազմավորումը: Այս գործի նախաձեռնողներից էին Վիրահայոց թեմի հոգեւոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, բանաստեղծ Հարություն Ալամդարյանը եւ այլք:

1827 թ. գարնանը Թիֆլիսում կազմավորվում է հայկական առաջին կամավորական գումարտակը (117 հոգի), որը, շտաբս-կապիտան Սմբատյանի (Սումբատով) գլխավորությամբ, ուղարկվում է Էջմիածին: Հունիսին կազմավորվեց 2-րդ գումարտակը (100 հոգի), իսկ օգոստոսին՝ 3-րդը (67 հոգի): Կամավորական մի հեծելազոր էլ ստեղծեցին Արցախի հայերը: Երեւանյան արշավանքի ժամանակ կամավորական գումարտակներում մարտնչող հայորդիների թվաքանակն անցնում էր 1000-ից, եւ դա այն դեպքում, երբ Երեւանի եւ Նախիջեւանի խանություններում հայերի թվաքանակն այնքան էր իջել, որ հազիվ էր անցնում 25 000-ից:

Հայ կամավորական գումարտակներն առաջնորդվում էին 34 հոդվածից բաղկացած եւ գեներալ Պասկեւիչի կողմից 1827 թ. վավերացված «Առաջադրություն» անունը կրող կանոնադրությամբ: Ըստ «Առաջադրության»՝ կամավորական գումարտակների շարքերում կարող էին ընդգրկվել 18-30 տարեկան տղամարդիկ: Ծառայության ընթացքում նրանց ընտանիքները «Առաջադրության» 3-րդ հոդվածով ազատվում էին հարկերից եւ պարհակներից: Կամավորական ջոկատներն ունենալու էին իրենց զինանշանը, համազգեստը, առնվազն կապիտանի աստիճան ունեցող ազգությամբ հայ հրամանատար: Զենքը, հագուստը եւ սննդամթերքը ստանում էին ռուսական պետությունից: Բոլոր հրամանները եւ ռազմական առաջադրանքները տրվում էին հայերեն: Ռազմական գործողություններում աչքի ընկածները պարգեւատրվում էին՝ ստանալով սպայական աստիճան:

1827 թ. գարնանը ռուսներն անցնում են վճռական քայլերի: Նրանք նպատակադրվել էին գրավել Երեւանի եւ Նախիջեւանի խանությունները: Սրանից վախենալով՝ Երեւանի խանը բռնի կերպով տեղահան արեց մեծ թվով հայերի՝ քշելով նրանց Պարսկաստանի խորքերը: Նա նաեւ ամրացրեց Երեւանի եւ Սարդարապատի բերդերը, հավաքեց մեծ թվով զենք, զինամթերք եւ պարենամթերք:

1827 թ. ապրիլի 2-ին Կովկասյան կորպուսի մի զորամաս հայ կամավորների ուղեկցությամբ ներխուժում է Երեւանի խանություն: «Վիճակը նետված էր»: Սկսվում էր ռուսական զորքերի երեւանյան 3-րդ արշավանքը: Ապրիլի սկզբին ռուսները գրավում են Էջմիածինը, իսկ ապրիլի վերջին պաշարում Երեւանի բերդը: Մայիսին ռուսական գլխավոր ուժերը (8600 զինվոր)՝ գեներալ Պասկեւիչի հրամանատարությամբ, մտնում են Երեւանի խանություն եւ հունիսի 8-ին հասնում Վաղարշապատ: Այնուհետեւ Պասկեւիչը Երեւանի մատույցներում է թողնում գեներալ-լեյտենանտ Աֆանասի Իվանովիչ Կրասովսկու դիվիզիան եւ շարժվում Նախիջեւանի ուղղությամբ: Գրավելով Նախիջեւանը եւ Աբասաբադ բերդը՝ ռուսները զբաղեցնում են Նախիջեւանի խանության ողջ տարածքը: Խուճապի մատնված պարսիկները զինադադար են առաջարկում: Սկսվում են բանակցությունները, սակայն շուտով պարսիկներն անցնում են նոր հարձակման: Աբաս-Միրզան 30000-անոց զորքով պաշարում է Էջմիածինը, սակայն օգոստոսի 17-ին Օշականի ճակատամարտում պարտություն է կրում Կրասովսկու 3 000-անոց (այդ թվում՝ 100 հայ կամավորական) զորամասից:

Այնուհետեւ ռուսներն անցնում են վճռական հարձակման: Եռօրյա մարտերից հետո՝ սեպտեմբերի 19-ին, ռուսները գրավում են Սարդարապատի բերդը եւ 1827 թ. սեպտեմբերի 24-ին պաշարում Երեւանի բերդն ու հոկտեմբերի 25-ի վաղ առավոտից գնդակոծում այն:

Երեւանի բերդը կառուցված էր Հրազդան գետի ժայռոտ ափին: Այն 3 կողմից պաշտպանված էր երկշար պարիսպներով, իսկ չորրորդ կողմում Հրազդանի ձորն էր: Պարսպի բարձրությունը 10,5-12 մետր էր, երկարությունը՝ 4,5 կիլոմետր: Բերդն ուներ շուրջ 6000-անոց կայազոր եւ տարբեր տեսակի 100 հրանոթ:

Հասան խանը նախապես շրջակա գյուղերի ավելի քան 10 000 հայի քշել էր բերդը, որպեսզի նրանք չկարողանային օգնել ռուսներին: Սակայն սեպտեմբերի 30-ին հայերն ապստամբություն բարձրացրին: Սեպտեմբերի 30-ի՝ լույս հոկտեմբերի 1-ի գիշերը ռուսական 40 հրանոթ ռմբակոծում էր բերդը:

1827 թ. հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական զորքերը եւ հայ կամավորները մտան Երեւանի բերդ: Ռուսների ձեռքն ընկան 3 000 զինվոր, Հասան խանը, 100 թնդանոթ, մեծ քանակությամբ հացահատիկ: Բերդի գրավման համար մղված մարտերում ռուսները կորցրել էին 52, իսկ պարսիկները՝ շուրջ 3 000 զինվոր:

Երեւանի բերդի գրավումն իր գեղարվեստական արտացոլումն է գտել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» պատմավեպում: Այնտեղ հստակ նկարագրվում է Արեւելյան Հայաստանի մռայլ դրությունը 18-րդ դ. վերջին եւ 19-րդ դ. սկզբին:

Երեւանի գրավման համար ռուսներից եւ հայերից շատերը պարգեւատրվեցին «Երեւանի բերդի գրավումը» մեդալով: Երեւանի առման կապակցությամբ շնորհավորական ջերմ ուղերձներ առաքվեցին Արեւելյան Հայաստան հայկական գաղթավայրերից:

**դ) 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտը. Թուրքմենչայի պայմանագիրը:**

Երեւանի բերդի գրավումը 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմում ռուսական զորքերի ամենամեծ հաջողությունն էր:

Երեւանի բերդի գրավումից հետո ռուսները լավ էին գիտակցում, որ պարսիկները խուճապի են մատնվել, եւ ձգտում էին շարունակել ռազմական գործողությունները, քանի որ պարսիկները դեռեւս չէին ցանկանում հաշտություն կնքել:

1827 թ. հոկտեմբերի 13-ին ռուսները գրավեցին Թավրիզը: Պարսիկները զինադադար խնդրեցին: 1827 թ. նոյեմբերին սկսվեցին եւ մինչեւ հաջորդ տարվա հունվարի սկիզբը շարունակվեցին բանակցությունները, որոնք որեւէ դրական արդյունք չտվեցին: Պարսիկներն այդ ընթացքում համալրում էին իրենց բանակը: Ուստի ռուսները դադարեցրին բանակցությունները եւ շուրջ մեկ ամսվա ընթացքում գրավեցին Ատրպատականի մեծ մասը՝ Մարաղան, Ուրմիան, Խոյը, Սալմաստը, Արդաբիլը, Միանեն եւ այլ տարածքներ: Առջեւում Թեհրանն էր, ուստի պարսիկները հաշտություն խնդրեցին:

1828 թ. փետրվարի 10 (22)-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհին գտնվող Թուրքմենչայ (Թուրքմանչայ) գյուղում Պասկեւիչը եւ Աբաս-Միրզան հաշտության պայմանագիր ստորագրեցին: Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանը պարտավորվում էր 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք վճարել, Ռուսաստանին զիջել Երեւանի եւ Նախիջեւանի խանություններն ու Օրդուբադի գավառը:

Վերահաստատվում էր նաեւ Գյուլիստանի պայմանագիրը, որով Ռուսաստանին էին անցել Անդրկովկասի հյուսիսային եւ արեւելյան շրջանները:

Այսուհետ Կասպից ծովում ռազմական նավատորմ ունենալու իրավունք ուներ միայն Ռուսական կայսրությունը:

*Շարունակելի*

*Միքայել ՍԱԼԽԱՍՅԱՆ*



Երեւանի գրավումը (գործ՝ Վ. Մաշկովի)



Թուրքմենչայի պայմանագրի կնքումը (գործ՝ Վ. Մաշկովի)

# ՀԱՅՀՈՅԵԼՈՎ՝ ԱՆԱՐԳՈՒՄ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 6*

Հիշում եմ՝ զինծառայությանս առաջին օրերին քնելուց առաջ մի սերժանտ կարգադրեց. «Հիմա ես ասում եմ՝ օրն անցավ, բոլորդ այսինչ բանը կասեք (բանակում ծառայած շատերին հայտնի հայհոյանք է), լսեցի՞ք»: Ես ասացի՝ ո՛չ... Ապշեց «հանդգնությանս» համար, մոտեցավ, որ պատժի: Ասաց՝ էդ ո՞նց: Հանգիստ բացատրեցի. «Ամբողջ օրն առանց այն էլ բազմաթիվ մեղքերով պղծվել ենք, մի հատ էլ քնելուց առա՞ջ պղծվենք: Ավելի լավ չէ՞ ասենք՝ փառք Աստծու»: Երեւակայեք՝ տղան սրտով անկեղծ էր, ընկալեց ասածս ու զինվորներին հրամայեց. «Լսեցի՞ք, ուրեմն՝ ասում եմ՝ օրն անցավ, բոլորդ ասում եք՝ փառք Աստծու»: Եվ հետո ամեն գիշեր դա կրկնվում էր:

**- Հայհոյախոսներից ոմանք չեն գիտակցում պղծախոսության վնասները թե՛ շրջապատի, թե՛ իրենց համար: Կարելի՞ է ասել, որ դիմացինին հայհոյելով ու անարգելով՝ անարգում ենք Աստծուն:**

- Եթե մեկը պաշտում է Աստծուն, ինչպե՞ս կարող է հայհոյել Աստծու պատկերով մարդուն: Եթե հարգում է Հորը, չի անարգի որդուն, որովհետեւ դրանով կվիրավորի Հորը: Նույնն է հայհոյանքի պարագայում. եթե մեր մտավոր դաշտի մեջ անարգում ենք Աստծու պատկերով ստեղծվածին, անկասկա՛ծ մեղանչում ենք Աստծու դեմ:

Ինչ վերաբերում է գիտակցել-չգիտակցելուն, մեր Տերն Ավետարանում հստակորեն զգուշացրեց, որ դատաստանի օրը պետք է պատասխան տանք յուրաքանչյուր դատարկ բառի համար: Ո՛ւր մնաց՝ հայհոյանքի...

**- Հայրերը զգուշացնում են հեռու մնալ հայհոյողներից՝ լսելիքը չաղտեղելու համար: Բայց ահա բարեպաշտ մի քրիստոնյա ապրում կամ աշխատում է մի միջավայրում, ուր այնքան էլ դյուրին չէ հեռու մնալը, եւ ականջդ ակամա լսում է պղծություններ: Ի՞նչ անել նման պարագայում, եթե չես կարող արգելել:**

- Հեռու մնալը, անշուշտ, իմաստություն է, սակայն եթե չես կարող... Գիտե՞ք՝ սրա մեջ էլ բարիք կա, եւ դա այն է, որ երբ դու չես հայհոյում, քեզնից Աստծու լույսն է թափանցում նրանց մեջ՝ թեկուզ դանդաղորեն, թեկուզ փոքր-ինչ: Դա արդեն բարիք է:

**- Ինչպե՞ս է հնարավոր ձերբազատվել հայհոյության զազրելի մեղքից:**

- Միայն եւ միայն ապաշխարությամբ, անկեղծ զղջումով ու քրիստոնեավայել վճիռով, որ այլեւս շուրթերը, բերանը եւ լեզուն պիտի ծառայեցնել Աստծուն, Նրա օրհնությանն ու փառաբանությանը, մարդկանց սփոփելուն ու խաղաղեցնելուն, որ այդ բերանն արտաբերի միմիայն աղոթքի, սիրո, օրհնության ու մխիթարության խոսքեր:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 2. 06. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**